

ՄԱՇՏՈՅԵԱՆ ՏԱՐԱՁԵՒԵՐԻ ԵՒ

ԴՐԱՆՑ ԺԱՅՈԱՊԱՏԿԵՐ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԱՂԵՐՍՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ՄՅՈՒԻՇ՝ որ ծնն՛նք,
եղա՛ւ, որ լինն՛նք,
եւ անմահացա՛ւ,
Որ անմահանա՛նք...

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ
«Եւ այս մի Մաշտոյ անոն»

Մեսրոպ Մաշտոցի հանճարի արդասիք, հայոց լինելութեան արմատ այբուբենի գիւտն աւելի քան 15 դար ի վեր պարուրուած է խորհրդաւորութեան շղարշով ու դեռեւս անպատասխան են մի շարք առեղծուածային հարցեր: Դրանցից առանցքային են նախամաշտոցեան հայ գրի գոյութեան ու մեսրոպեան տառաձեւերի տեսքի խնդիրները, որոնց անդրադարձել են բոլոր ժամանակների կարկառուն հայագէտները՝ բնականաբար՝ սկսած Կորիւնից ու Մովսէս Խորենացուց:

Միայն մի քանի մատենագրական փաստ է վկայում հայ գըրի առկայութիւնը Մաշտոցից առաջ, այն էլ՝ անուղղակիօրէն: Դրանք են՝

ա) Հայոց Արգար թագաւորը, ըստ Մովսէս Խորենացու, մեր թուականութեան սկզբին, կառուցելով եղեսիա մայրաքաղաքը, այնտեղ է փոխադրում կուռքերը եւ մեհեանների վարժարանի մատեաններն ու թագաւորների դիւանները՝ «... զմատեանը մեհենից վարժարանին, եւ միանգամայն զդիւանս թագաւորացն»¹:

¹ ՄՈՎՍԻՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՑ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղեան եւ Ս. Թարութիւնեան, Տփղիս, 1913 (վերահրատ. Երեւան, 1991, լրացումները Ա. Բ. Մարգարուանի) (այսուհետ՝ Խոր.) Բ գիրք, իկ, էջ 144:

բ) Փիլոստրատոսը Գ. դարի սկզբներին (211-17 թթ.) հաղորդում է իր լսած տեղեկութիւնը Տաւրոսի լեռներում բըռնուած յովազի ուսկէ մանեակի Հայերէն տառերով մակագրութեան մասին՝ «Արշակ թագաւոր՝ նիւսիայ աստուծուն»²:

գ) Ասորի քրիստոնեայ առաջին մատենագիրներից մէկը՝ Բարդածանը (154-223 թթ.), ըստ Մովսէս Խորենացու՝ «Եմուտ նա յամուրն յԱնի, եւ ընթերցեալ զմեհենական պատմութիւնն, յորում եւ զգործս թագաւորացն, ...եւ փոխեաց զամենայն ի կեզու ասորի. որ եւ ապա անտի յեղաւ ի յոյն քան»³: Քանզի սկզբնագրի լեզուն յունարէնն ու ասորերէնը չէին, հաստատում է, ըստ երեւոյթին, տեղական լեզուն՝ Հայերէնը⁴: Թէեւ չի բացառում նաեւ պահլաւերէնը:

դ) Հռոմէացի մատենագիր Հիպատիոսուս Բոստրիացին «Հրովիկոν որո Էլլηνաց» աշխատութեան մէջ (234-35 թթ.) թուարկում է ժողովուրդներ, որ դպրութիւն ունեն՝ իբերներ, լատիններ, իսպանացիներ, յոյներ, մարեր, հայեր⁵:

² Philostrati de vita Apollonis Tianei (գերմ. թարգմ. Frd. Iakobs), հռ. 2, Stuttgart, 1829, էջ 44, 229: Այս մասին տե՛ս ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ ԻՍ., Հայոց գիրը, Թիֆլիս, 1892, էջ 252, ԱԲՐԱՀԱՄՄԵՍԱՆ Ա. Գ. Հայ գրի եւ գրչութեան պատմութիւն, Երեւան, 1959, էջ 38-39:

³ ԽՈՐ., Բ գիրք, ԿԶ, էջ 201:

⁴ ԱԲՐԱՀԱՄՄԵՍԱՆ Ա. Գ., նշ. աշխ., էջ 37, ՍԱՐԴՎԵՍԱՆ Գ. Խ., Նախամեսրոպեան

շրջանի պատմագրութիւնը.- Պատմաբանասիրական հանդէս, 1969. թիւ 1, էջ 124:

⁵ Յունարէն բնագրում «Օι δε ἐπισταμένοι αυτῶν γράμματα εἰσιν: Ιθῆρες, Λατῖνοι, οἵς Χρωταῖος Ρωμαιοί, Ζπανοί, Ελλήνες, Μεδοί, Ἀρμενιοί» (*Hippolitus Werke*, IV Bd. Die Chronik, Leipzig, 1929, էջ 58): Հայերէն՝ «Եւ այս ազգի են՝ որ գիտեն ի սոցան է դպրութիւն: Իբերացին, Լատինացին՝ որով Հոռոմէըն վարին, Սպանիացին, Եղիշէ, Մարք, Հայք» (ԱՆԱՆԻՍ. ՇԻՐԱԿԱՑՈՒ մատենագրութիւնը. ուսումնասիրութիւն եւ բնագրեր, աշխ. Ա. Գ. Աբրահամեանի, Երեւան, 1944, էջ 360). Նոյն հասուածը տե՛ս նաեւ Անամուն ժամանակագրութիւն, Խմբագիր յօրինեալ յ' է դարու, ի հնագոյն ժամանակագրաց եւ հրատարակեալ ներածութեամբ և բաղդատառութեամբ Հ. Բարսեղ Սարգսիսեան, Վենետիկ-Ս. Հազար, 1904, էջ 6: Գրեթէ նոյնն է գրուած եւ «Ռակեփորիկ» կոչուած ձեռագրում (առաւել յայտնի է «Վարդանագիրք» անունով). Որդիկ Յարերի՝ որ դպրութիւն գիտեն՝ այս են. Հայք, Երեացին, Լատինացին, Սպանիացին, Եղիշէ, Մարք, Վեց ազգի: Որդիկ Սևանայ՝ որ գիտեն դպրութիւն. Հրեայք, Պարսկ, Քաղեացին, Հնդիկ, Ասորեստանացին, հիմք ազգի» (Պատառիկ մի գրոց Մեծի վարժապետին Վարդանայ

ե) Ագաթանգեղոսը վկայում է, որ քանդեցին, այրեցին եւ աւերեցին քրմական գիտութեան դպիր Տիր աստծու ճարտարութեան ուսման մեհեանը⁶ (գտնուում էր Վաղարշապատի ու Արտաշատի միջեւ, ենթադրում է՝ Զուարթնոցի մօտակայքում):

զ) Կորիւնը, Ղազար Փարպեցին եւ Մովսէս Խորենացին յիշատակում են դանիէլեան գրերը⁷:

է) Մովսէս Խորենացին, թէեւ հրաշապատումի ձեռով, փրկել ու մեզ է հասցել ժայռագրութեան ու տառաստեղծման աղերսների մի հնագոյն վկայութիւն՝ Մաշտոցի երազը. «Եւ տեսանե ոչ ի քուն երազ եւ ոչ յարբնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երեւութացեալ հոգւոյն աչաց թարթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Խ, զի որպէս ի ձեան վերջը գծին կրւտեալ կուտակեալ/ ուներ քարն: Եւ ոչ միայն երեւութացաւ, այլ եւ հանգամանք ամենայնին որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքե-

վասն գիտի տառից մերոց ի ձեռն Ս. Մեսրոպայ.- Բազմավէպ, ԱՅԼՁ-1887-ԱՅԼէ, Հա. ԽԵ, պրակ Գ (թիւ 7-9), էջ 197):

Ի դէպ, իր հրատարակած բոլոր աշխատանքներում Ա. Արքահամեանը բնադրային լիրուս -ը թարգմանել է «Երբայեցիի», որեւէ կերպ չհիմնաւորելով այդ (ԱԲՐԱՀԱՄԵԱՆ Ս. Գ.՝ Նախամեսրոպեան հայկական գրականութեան հարցը. Մատենադարանի գիտ. Նիւթերի ժողովածու, Հա. Ա. Երեւան, 1941, էջ 50, Առյ. Ար, Հայ գիր եւ գրչութեան..., էջ 39, Առյնը, Հայ գիր եւ գրչութիւն, Երեւան, 1973, էջ 18, Առյնը, Նախամաշտոցեան հայ գիր եւ գրչութիւն, Երեւան, 1982, էջ 98): Այսինչ Խոսքը պարզապէս Պիրէնէեան թերակղզու իրերների մասին է (իսպանացիները՝ ՀՊԱՆՈՒ, Նշուած են): Երբայեցիները գիր ունչին եւ այդ նշուած է՝ դպրութիւն ունեցող սեմական ազգերի շարքում:

6 ԱԳԱԹԱՆԳԵՂԱՅ. Պատմութիւն Հայոց, քնն. բնագիրը՝ Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Կանայեանցի, աշխարհաբար թարգմ., Ա. Տէր-Ղեւոնդեանի, Երեւան, 1983, 778, էջ 436-37:

7 ԿՈՐԻՒՆ, Պատմութիւն վարուց եւ մահուան Սրբոյն Մեսրոպայ Վարդապետին Մերոյ թարգմանչի, Թիֆլիս, 1913, էջ 12-13, ԿՈՐԻՒՆ, Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ Ընթերցուածներով, թարգմ., առաջաբանով եւ ծանօթ-գիրը, ձեռագրական այլ Ընթերցուածներով, թարգմ., առաջաբանով եւ ծանօթ-գիրը. Դոկտ. Մանուկ Աբեղեանի, Երեւան, 1941, Զ, էջ 42-46, ՂԱԶԱՒ-ի ձեռն պլոտ. Դոկտ. Մանուկ Աբեղեանի, Երեւան, 1983, Փ, էջ 32, ԽՈՐ., Գ գիրք, ՄԲ, էջ ծանօթ.՝ Բ. Աւուրաբեանի, Երեւան, 1982, Ժ, էջ 32, ԽՈՐ., Գ գիրք, ՄԲ, էջ 325-26:

ցաւ»⁸: Խորենացու երկրորդ վկայութիւնը ժայռափորագրման առթիւ՝ Տորք Անգեղի արծիւներ գրելու մասին է⁹. «Քանզի երգէին նմա բուտե հարկանել զորձաքար վիմաց ձեռօֆ, ուր ոչ գոյր գեղութիւն, եւ ճեղքել ըստ կամաց մած եւ փոքր. եւ ֆերել եղնգամբքն եւ կազմել որպէս տախտակ, եւ գրել նոյնպէս եղլընգամբք իւրովք արծուիս եւ այս այսպիսիս»¹⁰: Նշեմ, որ աշխարհաբարի վերածելիս Ստեփանոս Մալխանանցը «գրել արծուիս»-ը դարձրել է «գծում էր արծիւներ»¹¹, ինչը շեղում է բնադրային իմաստից:

ը) Վարդան Արեւելցին (1198-1271 թթ.) յիշատակում է Կիլիկիոյ Լեռն Բ. Մեծագործ արքայի օրոք (թագ. 1198-1219 թթ.) գտնուած դրամի նախաքրիստոնէական շրջանի Հայերէն գրերը. «Եւ զի լեալ է հայերէն գիր ի հենցն՝ վկայեցաւ ի ժամանակս Լեռնի արքայի. զի գտաւ դրամ ի Կիլիկիա, հայերէն գրով դրոշմեալ զանուն կոսպաշտ բագաւորացն Հայկազնեց...»¹²:

Պատմիչը յիշատակում է նաեւ, որ «Մեսրոպ Մաշտոցը հայրեն նշանագրեր գտնելու մտքով տարուած, Սահակ Պարբերի հետ, իր անձը աղօրքի է նուիրում. լսելով նրա խնդիրքը, ասուած թայու գաւառում գտնուող լերան կատարին իր աջով 14 հա-

⁸ ԽՈՐ., գ գիրք. ՄԳ, էջ 327: Գրեթէ նոյն է հաղորդում նաեւ Փարակցին (Պատմութիւն Հայոց, Ժ, էջ 34). Տե՛ս նաեւ ԳԱՐՍԳԱԾԵՆԱՆ Ա. Մ. Քննական պատմութիւն հայոց, մասն Գ. Թիֆլիս. 1895, էջ 191-93, ԴԱՆԻԵԼԵՆԱՆ Է. Լ., Հայութիւն հայոց, մասն Գ. Թիֆլիս. 1995, էջ 191-93:

⁹ ԶԱ ԱՐԴՅՈՒՆԱՎԱՐ Աշխարհության վեհականության մասին, Երևան, 1969, էջ Ճկթ.

¹⁰ *ibid.* *C*-*trs*. *C* 115;

¹¹ Մուն., Բ գիրքը, Հ շ. 52:

ՍՊՈՎԱԾԵ ԽԹՐՅՆԱԱՑԻ, Պատմութիւն Հայոց, թարգմ., ներած. եւ ծանօթ՝ ակադ. Արք. Մահմադաբանի, Եղեռակ, 1968, Բ գիրք, Հ. 52 138:

12 Ստ. Մալիսասամց, Օրբելյան, Հայոց պատմութեան Վարդանայ Վարդապեսի լուսարանիալ, Վեհե-
ձաւագումբ պատմութեան Վարդանայ Վարդապեսի լուսարանիալ, Վեհե-
տիկ-Ա. Ղազար, 1862, ԻԵ, էջ 50; ԶԱՄՉԵԱՆ Մ., Պատմութիւն Հայոց ի
սկզբանէ աշխարհի մինչեւ ցամ Տեառն 1784, Համ. Ա, Վեհետիկ, 1784 (Հայոց
պատմութիւն, Համ. Ա, Երեւան, 1985), ՄԴ, էջ 756, 760; Այս մասին տե՛ս ՅԱՐԻ-
ԹԻՒՆԵԱՆՑ Ի.Ս., Նշ. աշխ., էջ 251, ԱՃԱՐԻՆԵԱՆ ՀԲ., Հայոց գրերը, Վեհենա,
1928, էջ 64, 67-68, Աղյօթ, Երեւան, 1984, էջ 433, 435, Աղյօթ, Երեւան, 1984, էջ
433, ՄՈՎՍԻՍԵԱՆ Ա., «...Գիրշմեալ զանում կուպաշտ թագաւորացն Հայկա-
գանց»- Գարուն, 1996, թիւ 8, էջ 68-71, Աղյօթ, Վանի թագաւորութեան (Բիայ-
կանց), Ուրարտու, Արարատ) միենագրութիւնը, Երեւան, 1998, էջ 56:

յերէն նշանագրեր է լիրոշմում, որոնք իբր թէ մինչեւ այժմ երեսում են մարդկանց աչքին»¹³:

Ուշ լրջանի այլ պատմագիրներ եւս հաւասարում են նախամեսը պատմական գրի առկայութիւնը՝ Անանուն զրուցագիրը (Զ. դ.), Սերենուը (է. դ.), Յովկիաննես Դրասխանակերտցին (Թ. դ.), Ստեփանոս Աստղիկը (Ժ. դ.), Կարապետ Սասնեցին (ԺԱ. դ.), Սամուել Անեցին (ԺԲ. դ.), Կիրակոս Գանձակեցին, Վարդան Բարձրաքերդցին (ԺԲ. դ.)¹⁴ եւ այլք:

**Նախամաշտոցեան գրի գոյութեան անուղղակի վկայութիւններ
են ներկայանում՝**

ա) ոսկեղարեան հայերէնի ճոխութիւնը եւ զարգացածութիւնը, քանզի բանաւոր խօսքը չէր կարող այդչափ զարգանալ ու պահպանուել առանց գրաւորի,

բ) լայն տարածուած պաշտամունքի, զարգացած դիցարանի եւ թատրոնի առկայութիւնը,

գ) դպրութեան առկայութիւնն ու մակարդակը,

դ) գիտելիքների եւ հմտութիւնների (աստղագիտութիւն¹⁵, տումար, բժշկութիւն, տեխնիկա, մետաղաձուլութիւն, զինագործութիւն,

¹³ Հաւաքումն պատմութեան Վարդամայ Վարդապետի ..., էջ 49-50, մէջբերումն ՂԱՆԱԼԱՆԵԱՆ Ա. Տ. Մեսրոպ Մաշտոցը հայկական աւանդութիւններում.- Մեսրոպ Մաշտոց. յօդուածների ժողովածու, Երեւան, 1963 (այսուհետ՝ ՄՄՀԺ, 1963), էջ 329:

¹⁴ ՏԵՇԻ ԱՐԵՎԱՔԵԼԵԱՆ Ա. Գ., Հայ ժողովրդի մտաւր մշակոյի զարգացման պատմութիւն (ՄՆԱՑԱԿԱՆՆԵԱՆ Ա. Ս., Մեսրոպ Մաշտոցը և Հայաստանեան սեպագրերը-դ. մ.թ.ա. - ԺԴ. դ.), Երեւան, 1959, էջ 169-71, Սովետական գրականութիւն, 1972, թիւ 4, էջ 158:

15 «Զգայարակն առաջնորդ սուր էին քանի զայդմուց» զոր վկայեած բազումք. վասի որոյ ոչ միայն զարեգական գնացս կարացին նկատե, այլ և զրոյոր լուսաւրացս կարացին դրոշմել եւ նաևաչել (Տիեզերագիտութիւն եւ տումար, Երեւան, 1940, ՄԹ, էջ 83-84): («Նախնիների զգայարակներն առաւել սուր էին, ինչը շատերն են վկայում. ուստի ոչ միայն արեգակի շարժումը կարողացան նկատե, այլեւ բոլոր միւս լուսատուերի շարժումը կարողացան դրոշմել ու նաևաչել»), (ընդգծումները՝ Կ. Թ.):

Համաշպան, ըստութեան հակալի պահպանած այս Հաստուածն առանձնայսուով կ նշանակութայց գիտութեան հակալի պահպանած այս Հաստուածն առանձնայսուով կ նշանակութեան ունի, սա հաւանաբար աշխարհում յայտնի հնագոյն մատենագիտական վկայութիւնն է ժայռապատկերների վաղեմութեան եւ հաւաստիութեան, քանզի

շինարարական ու կիրառական արուեստ) զարգացման բարձր աստիճանու,

«**ეტრუგზები**» բառը քա՛րի վրայ փորագրել, արձանագրել, քանդակել է յուշում: «**Դրօշ**» արմատից, որն ունի նաև «կլուռքի պատկեր, արձան» իմաստ, ծագում էն «**դրօշել**» (փորել, քանդակել), «**դրօշագործութիւն**» (արձանագրութիւն). «**դրշշեալ**» (քանդակեալ պատկեր) բառերը: **Աւելին.** նկարագրում նշանակում է «գիր, նշանագիր» (Հր. Աճառեան. Հայերէն արմատական բառարան, Հռ. Ա, Երեւան, 1971, էջ 694, 697): **Ստ.** Մալխասեանցն էլ ընդգծում է «դրօշ» եւ «դրօշել» բառերի կիրառման սրբազնական կողմը՝ «Քանդակուած պատկեր, արձան, յաստակէս կիրառման սրբազնական կողմը»: Արձան քանդակել, կուռք շինել: **Դրօշշեալ** ասառուածների արձան, կուռք: Արձան քանդակել, կուռք շինել: **Դրօշ** պատկեր, արձան, կուռք: Արձան քանդակել, կուռք շինել: **Դրօշ** պատկեր, արձան, կուռք:



Դաշտ 1

ե) այբուբենի գիւտին նախորդած աւելի քան 30 դարեայ շրջանում պետականութիւնների առկայութիւնը (Արատաս, Հայաստ, Բիրայնա /Արարատ/ Ռէտարտու, Նախիջևանի) եւ դրանց քաղաքական ինքնուրոյնութիւնը,

զ) ներքաղաքական կեանքը եւ սերտ կապերը հարեւան ազգերի ու երկրների հետ,

է) տնտեսական ու ընկերային զարգացման որոշակիորէն բարձր աստիճանը:

Այս ամէնը ենթադրում են տեղեկութիւնների արտայայտման, գրանցման, պահպանման ու փոխանցման միջոցների փոքրիչատէ միանական համակարգի՝ գրի գոյութիւնը:

Անուղղակի վկայութիւններ կարող են ծառայել նաև՝

ա) էթնոմշակութային օջախ ու խաչմերուկ լինելը, աշխարհագրական դիրքը,

բ) հարեւան մի շարք ազգերի գիր ունենալը,

գ) քրիստոնէկութեան ընդունմանն ուղեկցած՝ մշակութային արժէքների որոշակի կրուստներն ու վերափոխումները,

դ) մազդէական կրօնափոխման փորձերի աւելիչ ազգեցութիւնը մշակոյթի ոլորտում,

է) Հայոց մէջ հնագոյն ժամանակներից մինչեւ Մաշտոցի գիւտը գործածուած գրի գոյութեան ուղղակի փաստերն են՝

ա) առարկայական գրի առկայութիւնը,

բ) ժայռափորագիր պատկերագրութիւնը Հայաստանում,

գ) հայկական մէհենագրութեանը,

դ) տեղական եւ այլ սեպագրական համակարգերի առկայութիւնը:

Հայոց գրի պատմութեան ուսումնասիրութիւնը, նորօրեայ մակարդակում, սկզբնաւորուեց Հրաչեայ Աճառեանի «Հայոց գրերը» աշխատութեամբ¹⁶, որում նա յանդել է չորս հիմնարար եզրակացութեան՝

ա) մինչմեսրոպեան հայկական այբուբեն չի եղել,

բ) դանիէլեան գրերը հայկական չեն,

գ) հայկական այբուբենը ստեղծել է Մաշտոցը, այն էլ՝ յունական տառերի ձեւափոխութեամբ,

դ) հայերէնի այն հնչիւնների համար, որոնք չկային յունարէնում, Մաշտոցի ստեղծած տառերն էլ ձեւափոխութիւն են յունական նախատիպերի:

Այս առթիւ հարկ է նշել, որ խօսքը այբբենակա'ն գրի մասին է, այլ ոչ թէ գրի՝ ընդհանրապէս:

Ցետագայում այս ինդիրն ուսումնասիրած գիտնականների մի մասը հիմնականում համակարծիք է Աճառեանին՝ Յակոբ Մանադիկանի¹⁷, Մանուկ Արեգեանի¹⁸, Ստեփանոս Մալխասեանց¹⁹, Էդուարդ Աղյոյեան²⁰, Էմանուէլ Պիւազեան²¹:

¹⁶ ԱՃԱՌԵԱՆ ՀՐ., Հայոց գրերը, Վեհեննա, 1928 (վերահրատ. Երեւան, 1968, 1984), սեռ նաև Աղյոյեան էֆ., Նախամաշտոցեան հայ գրի եւ գրականութեան, մեսրոպեան այրութենի եւ յարակից հարցերի մասին, Երեւան, 1977, էջ 8-9:

¹⁷ «Յայտնի է, որ հիմ, ինչպէս եւ ժամանակակից գիտնականների մեծագոյն մասը այս հարցը լուծում է այն իմաստով, որ մինչև Մեսրոպ Մաշտոցի գիւտը հայերը գրականութիւն չեն ունեցել: Նրանք մատնացոյց են անում գլխաւրապէս այն, որ այդ գրականութիւնց չի մնացել ոչ մի հետք եւ չկայ այդ մասին ոչ մի գրաւոր տեղեկութիւն» (ՄԱՆԱԴՅԱՆ Ա., Մեսրոպ Մաշտուկ և բօրբոքային հարցերի մասին, Երևան, 1941), նոյնը, Մեսրոպ Մաշտոցը եւ հայ ժողովրդի պայքարը մշակութային իմենությունների համար.- Մեսրոպ Մաշտոց. յօդուածների ժողովածու, Երեւան, 1962 (այսուհետ ՄՄՀԺ, 1962), էջ 43. նոյնը, Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, ՀԱՅ. Բ., մասն Ա, Երեւան, 1957, էջ 257:

¹⁸ «Նախ քան 5-րդ դարի սկզբները հայերէն լեզուով մէկ քառ անգամ գրուած չունենի ոչ քարերի վրայ, ոչ գրերի մէջ» (ԱԲԵՂԵԱՆ Մ., առաջա-

Նշեմ, որ Միթպյակը Զամշեանն էլ էր ընդունում, որ Մաշտոցը բոլորովին նոր այբուբեն կազմեց²²: Միխիթարեան հայրերից Ներսէս Ակիթեանն էլ է ենթադրում, որ հայկական մեհեաններում հայ քըրմական դասր սեփական հայ գիր ու գրականութիւն չի ունեցել²³:

- բան Կորիթինի «Վարք Մաշտոցի» գրքի (այսուհետ՝ ԱԿՎՄ), Երեւան, 1941, էջ 5):

Ցիշարժան է, որ այլ հրատարակութիւններում «Քարերի վրայ» արտայայտութիւնը բացակայում է. «Մինչ այդ՝ հայերեն լեզուով մի քառ անգամ չկար մատենաների մեջ գրուած, նոյն իսկ օտար լեզուների նշանագրերով» [ԱԲԵՂԵՆԱՆ Մ., Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականութեան սկիզբը. - Սովետական գրականութիւն, 1941, թիւ 2 (այսուհետ՝ ՄՄ ՀՀԳՄ), էջ 46, Առյնը, Հայոց իին գրականութեան պատմութիւն, գիրք Ա, Երեւան, 1944 (այսուհետ՝ ՀՀԳՊ), էջ 76-77, Առյնը, ԱԿՎՄ, Երեւան, 1962, էջ 47, Առյնը, ՄՄՀԺ. 1962, էջ 285, Առյնը, Երկեր, Հու. Գ, Երեւան, 1968, էջ 92]: Սակայն, նա ընդունում է պաշտօնական գրագրութեան գոյութիւնը. «... երեւ երբեւ գրաւոր կամ կալուածագրի պէտք ունեկին, այդ կատարել էին տալիս այլազգի գրերով ու լեզուներով» (ԱԲԵՂԵՆԱՆ Մ., ՀՀԳՊ, էջ 69, Առյնը, Երկեր, Հու. Գ, էջ 84): Աւելինա, այդուամենայինը, չի բացառում, որ «... Մեսրոպան գրերից առաջ փորձած լինեկին գրել կամ նոյնիսկ գրած լինեկին որեւէ քան հայերեն լեզուով, բայց այլ լեզուների նշանագրերով» (ԱԲԵՂԵՆԱՆ Մ., ՄՄՀՀԳՄ, էջ 50, Առյնը, ԱԿՎՄ, 1962, էջ 19, Առյնը, ՄՄՀԺ, 1962, էջ 256), (ընդգծումները՝ - Կ. Թ.):

19 Ստ. Մալխասեանը կտրականապէս բացառում է հայկական գրերի ու գրականութեան գոյութիւնը Հայաստանում մինչեւ Հայկական գրերի գիւտը Մաշտոցի ձեռքով՝ «Մեր այժմեան ունեցած փաստերի հիման վրայ դամբէկեան նշանագրերը հայերեն գրել չեն և հայերը մինչեւ Ս. Մեսրոպի գիրը՝ չունեկին սեփական ազգային այրութեան» (ՄՍԼԽԱՍԽԱՆ ՍՏ., գրախօսութիւն. Խասիակ Յարութիւնանց, Հայոց գիրը. Թիֆլիս, 1892.- «Տարազ» շաբաթաթերթ, Թիֆլիս, 1893, թիւ 6, էջ 92, թիւ 4, էջ 58-59, ՄՈՎՀԵՍ ԽՈՐԵՆԱԾԻ, Պատմութիւն Հայոց, Ժամանակակից աշխարհ, Երեւան, 1977: թիւ 185, էջ 363):

20 ԱՂԱՅԵՆԱՆ ԷԴ., Գոյութիւն ունեցե՞լ է արդեօֆ նախամեսրոպեան գիր և գրականութիւն. Գիտութիւն եւ տեխնիկա, 1969, թիւ 12, էջ 33-40, Առյնը, նախամաշտոցեան հայ գրի և գրականութեան, մեսրոպան այրութեան և յարակից հարցերի մասին, Երեւան, 1977:

21 ՊԻՒԱԶԵՆԱՆ ԷՄ., Նախամաշտոցեան հայ գրի և գրականութեան հարցի շուրջ. Պատմա-բանասիրական հանդէս, 1962, թիւ 4, էջ 153-70 (ՄՄՀԺ, 1963, էջ 285-324):

22 ԶԱՄՇԵՆԱՆ Մ., նշ. աշխ., էջ 755:

23 «Ամենայն ինչ անգիր աւանդութեամբ կ'ըմբանար. հայերեն լեզուի համար սեփական գրի ու գրականութեան պէտքը չեր գգացուած» (ԱԿԻՆԵՆԱՆ Ն., Հայերեն այրութեան գիւտը. Հանդէս Ամսօրեայ, 1938, թիւ 9-12, սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 292):

Հայագիտութեան, արեւելագիտութեան եւ գրաբանութեան կարեւորագոյն այս ինդրին անդրադարձել են նաեւ մեծ թուով եւրոպական գիտնականներ²⁴:

ա/ Ֆրիդրիխ Կոպպը կասկածանք է յայտնում, որ Հայոց այբուբենի ստեղծողը Մեսրոպն է կամ Յովհան Ոսկեթերանը, նաեւ մերժում է յունականի ու լատինականի հիմամբ դրա կազմման վարկածը, առաւել ընդունելի համարելով, որ այն ծագել է հին պարսկականից:

թ/ Ա. Վալը Դանիէլեան գիրը եւ դրա՝ ձախից աջ գրելը վերցուած է համարում յունականից: Մեսրոպն օտար տառերն այնպէս է փոխում, որ հին ձեւերն անհետանում են, թէպէտ հաւանաբար կան ասորական ու պարսկական տառերի ձեւեր:

դ/ Նոյմանը, հետեւելով Խորենացուն, ընդունում է, որ Հայերը Մեսրոպից առաջ գիր չունեին:

դ/ Գատերերը եւ Խոահիմ Շրոյդերը Հայոց այբուբենը յունարէնից ծագած են համարում:

ե/ Ֆրիդրիխ Վինդիշմանը կասկած է յայտնում, որ հինգերորդ դարում Հնարաւոր չէր նման կատարեալ տառադիր այբուբենի կազմումը, եւ որ դրա հիմքն օտար տարրեր էին՝ յունական ու ասորական գիրը:

զ/ Վեյն Ֆլորիւալն Խորենացու երկի Փրանսերէն թարգմանութեան մէջ Հայոց այբուբենի գիւտը վերագրում է սբ. Մեսրոպին:

է/ Խ. Վ. Բիւտները նշում է, որ Հայերը գործածում էին յունական, ասորական ու պարսկաց գրեր: Մեսրոպի գտած այբուբենի տառերի հիմնագծերից ճանաչում է դրա հին պարսկական ծագումը, իսկ տառերի դասաւորութիւնն էլ յունական է:

ը/ Ռումմելը գրում է, որ Հայերն օտար գիր էին գործածում, եւ Աստուածաշնչի թարգմանութեան առիթով գտնուեց կամ կազմուեց Հայոց այբուբենն ըստ յունական օրինակի:

24 Մտորել բնրուած տեղեկութէւններն՝ ըստ Խ. Յարութիւնանց, նշ. աշխ., էլ 286-301: Գրեթէ նոյնն է հազորդում նաեւ Գարեգին Զարքհանալեանը՝ «Հայկա-1897, էլ 56-68: կան հին դպրութեան պատմութիւն» գրքում, Վենետիկ, 1897,

Ժ/ Բնենդիկտեան կրօնաւորների հրատարակած այբուբենների մի համեմատական ցանկում հայոց այբուբենը նշուած է յունականից ծագածների շարքում:

Ժ/ Է. Բորեն համարում է, որ գենդի եւ ասորական այբուբենները նման են հայոց այբուբենին՝ տառերի հնչմամբ եւ նշանակութեամբ, ուստի Մեսրոպը այբուբենը կազմել է դրանց ուսումնասիրութեան հիմամբ:

Ժա/ Արեւելագէտ եւ հնախոյզ Ֆրանսուա Լենորմանը հայոց գիրն առաջացած է համարում գենդի (պարսկական) գրից:

Ժթ/ Հայագէտ Էդ. Դիվլորիկն մեր այբուբենն արամէականից ծագած է համարում:

Ժգ/ Հայագէտ Մ. Սէն-Մարտէնը կարծում է, որ Դանիէլեան տառերն ունիին յունական ձեւ, իսկ Մեսրոպը դրանց աւելացրել է պարսկական տառեր:

Ժդր/ Հայագէտ, արեւելագէտ Վիկտոր Լանգլուայի կարծիքն անորոշ է՝ մի տեղ գրում է, որ հինգերորդ դարից առաջ սեփական այբուբեն հայերը չեն ունեցել, մի այլ տեղ՝ որ Դանիէլեանը հայոց հին այրութեանն էր եւ ունէր ասորական ծագում:

Ժե/ Ֆրիդրիխ Միլլերը համամիտ է Խասհակ Թէյլորին եւ կարծում է, որ հայոց գրերի հիմքը իրանական-սեմական (պահաւի) է, իսկ Մեսրոպի աշխատանքն այն էր, որ արամէական բաղաձայնակազմ այբուբենից յունականի օրինակով մի այբուբեն կազմեց: Սակայն նրա կարծիքն այս խնդրում անորոշ է եւ տատանողական:

Ժգ/ Հայագէտ, արեւելագէտ, աղքիւրագէտ Մարի Բրոսսէն համարում է, որ հայոց հին այբուբենը 22 տառանի էր, որոնց Մեսրոպն աւելացրեց 14 տառ եւ դասաւորեց յունականի հերթականութեամբ:

Ժէ/ Վ. Գարդիառուզէնը փորձել է ապացուցել, որ հայոց այբուբենը ծագում է ուղղակի յունականից:

Ժը/ Գերմանական մի հանրագիտարանում ասուած է, որ հայերն ունիին սեմականից վերցուած 22 տառանի այբուբեն, որը կատարելագործեց Մեսրոպը:

ժթ/ Պառլ դը Լագարդը ընդունում է, որ հայոց այբուբենի հիմքը յունականն է:

Մինչեւրոպեան գիրգրականութեան գոյութեան ինդրում տրամադօրէն այլ գիրգրոշում ունէր Աշոտ Արքահամեանը²⁵: Նրա կարծիքով, Հնարաւոր է, որ՝

ա) այբուբենի գիւտից առաջ եղել է հայալեզու գիր եւ գրականութիւն,

բ) դանիէլեան գրերը հին հայկական մոռացուած կամ չօդուագործուած գրեր են,

գ) մեսրոպեան այբուբենը հիմնականում կամ մասամբ համընկնում է դանիէլեանին:

Նախամաշտոցեան հայալեզու գրի եւ կամ գրականութեան գոյութիւնը, տարբեր չափով ու հիմնաւորումներով, ընդունում է հայոգէտների մեծ մասը:

Առաջինը Ղուկաս Խեթինեանն է պատմական փաստերով հաստատել, որ դանիէլեան այբուբենը հայոց հին գործածական գիրն էր՝ «Զորս ոչ եթէ Դանիէլի էր յօրինեալ, այլ առ նմին Դանիէլի պահեալք իին հայկական նշանագիրք», եւ որ *Մաշտոցը լրացրեց դրանք՝ «դանիէլեան նշանագիրք էին զորս լրացոյց Մեսրոպ»: Այսինքն, Հայաստանում գոյութիւն է ունեցել հայկական գիր, ինչը նա հիմնաւորել է «նախնեաց» վկայութիւններով՝ «Արդ ՚ի բազում յայտնի վկայութեանց նախնեաց յայտ է թէ ՚ի սկզբան անդ ՚ի հնումն գոյր առ մեզ գիր հայկական, բայց առանց ձայնաւորի»²⁶:*

«Biographie Universelle» հրատարակութեան մէջ, «Մեսրոպ» հատուածում գրուած է «Այս այրութեան, որ բաղկացած է 36 տա-

²⁵ ԱԲՐԱՀԱՄՄԵՍՆ Ա. Գ., Նախամեսրոպեան հայկական գրականութեան հարցը. Մատենագրանի գիտ. նիսթերի ժողովածու, Հռ. Ա. Երեւան, 1941, էջ 41-52, նոյնը, նշ. աշխ., էջ 17-46, նոյնը, Նախամաշտոցեան հայ մատենագրութիւնը եւ դանիէլեան գրերը. - Պատմաբանասիրական հանդէս, 1963, թիւ 4, էջ 131-44, նոյնը, Նախաքրիստոնեական հայ գրի եւ գրականութեան հարցի շուրջը. Գիտութիւն եւ տեխնիկա, 1969, թիւ 1, էջ 27-36, նոյնը, Հայ գիր եւ գրչութիւն, Երեւան, 1973, էջ 13-26, նոյնը, Նախամաշտոցեան հայ գիր եւ գրչութիւն, Երեւան, 1982:

²⁶ ԻՆՃԻՃԵԱՆ Ղ., Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Հռ. Գ. Վենետիկ, 1835, էջ 73, 76:

ուերից, կազմուեցաւ երկրի մեջ սովորական հին գրի շատ նշան-ներից եւ յատուկ նոր գտած տառերից²⁷ (ընդգծումը՝ - կ. թ.):

Կ. Կոխը ճամբորդական նոթերում նշում է, որ Հայուկ գիւղում է ծնուել Հայոց ու վրաց այբուբենի «գտնող» Մեսրոպը: Մինչ նրա գիւղը Հայերն օգտուել են ասորական եւ յունական գրերից: Նրա գտած ՅԵ տառերին խաչակրաց արշաւանքների ժամանակ աւելանում է եւս երկուար: Սակայն աւելի հաւանական է Համարում Հ. Պետերմանի տեսակէտը, ըստ որի, Հայերն արդէն ունէին սեփական գիր եւ Մեսրոպը միայն ընդարձակել է այն:

Հայագէտ, լեզուաբան, սեմագէտ Հայնրիխ Պետերմանը համոզուած է, որ Մեսրոպը ո՛չ թէ ամբողջ այբուբենն է դտել կամ կազմել, այլ հին, վաղուց մոռացուա'ծը վերականգնել, կատարելագործել եւ տարածել երկրով մէկ: Իսկ տառերի դասաւորման կարգը, ձեւն՝ ու անունն առնուած են յունականից²⁸:

Հայագէտ, ուսուցչապէտ Մկրտիչ Էմինը կարծում է, որ Ագաթանգեղոսի յիշատակած նշանագրերը²⁹ սովորական՝ այբբենական տառեր չէին, այլ մեհենագրեր, քանզի ծառայել են իբրեւ արագագրութեան՝ սահագրութեան միջոց: Եւ դրանց մի մասը միջնադարեան ձեռագրերում հանդիպող նշաններն են: Նշանագրերին հետեւում են Դասիէլեան գրերը, որոնք էլ լրացուելով ու կատարելագործուելով՝ յայտնի են դառնում Մեսրոպէան անուամբ: Իսկ մինչեւ հին այբուբենի այդ վերականգնում-կատարելագործումը Հայաստանում կիրառուել են ասորական, պարսկական ու յունական գրերը: Մ. էմինը մերժում է բոլոր եւրոպական արեւելագէտների այն կարծիքը, որ Հայոց այբուբենը կազմուած է զենդականի եւ յունականի ձեւերով,

27 Biographie Universelle, ancienne et moderne, Paris et Leipzig, հա. 28, էջ 101: Այս մասին առեւ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ ԻՍ., նշ. աշխ., էջ 292:

28 H. H. Petermann, Grammatica linguae armeniaca, Berlin, 1837, էջ 3, Անյնը, Journal Asiatique, 1867, էջ 200, Անյնը, Real-Encyklopädie für protestantische Theologie und Kirche von Herzog und Plitt, Leipzig, 1877, հա. 1, էջ 666:

29 «Եւ մինչդեռ կայր նա կախեալ այնպէս՝ խաւեցաւ զայս ամենայն. եւ գրեցին ատենակալ դպիրքն նշանագրացն, ... գրեցին եւ մատուցին զայն առաջի բագաւրիմ...»: «... ոմանք ի մեծանեծ սպասաւորացն արքունի անդէն լընթացան պատմել բագաւորին զամենայն բանս նոցա. Քանզի դիպեցան անդ նշանագրիք, որ գրեցին զամենայն բանս, եւ ընթեցան առաջի բագաւորին» (ԱԳԱ-ԹԱՆԳԵԼԱՑ Պատմութիւն Հայոց, 99, 176, էջ 68, 104), առեւ ԶԱՐԲՀԱ-ՆԱԼԵԱՆ Գ., նշ. աշխ., էջ 18:

քանզի տարբերում է դրանցից՝ 1) տառերի տեսքով, 2) քանակով, 3) ձայնաւորների բացակայութեամբ³⁰: Այս դէպքում նա չգիտես ինչու՝ նշում է հին-հայկական (^(*) այբուբենը³¹:

Հայագէտ, ուսուցչապետ Քերովը Պատկանեանը համամիտ է Էմինին, որ Մաշտոցը կատարելագործել է եղա՛ծ գիրը եւ դարձրել այն լուսաւորութեան ու քրիստոնէական ուսմունքի տարածման գործուն միջոց: Այդ գիրն, ըստ նրա, անկասկած արամէական ծագում ունէր³²:

Հայագէտ, լեզուաբան, իրանագէտ Հայերիխ Հիւրշմանը համոզուած է, որ դանիէլեան գիրը յունական ծագում ունի եւ Մաշտոցը լրացրել-կատարելագործել է այն: Դրանով դադարեց պարսից, յունական եւ ասորական գրերի գործածութիւնը³³:

Ականաւոր գրաբան Կարլ Ֆաուլմանը համոզուած է, որ ամենահաւանականն այն է, որ Մեսրոպը ո՛չ թէ հայկական ու վրացական տառե՛րն է յայտնաբերել, այլ այդ ժողովուրդոների ժառանգութիւն հանդիսացող ժամանակի եւ համայնքի նշանները: Եւ Խորենացու հոգեւոր տեսիլքի իմաստն էլ այն է, որ Մեսրոպը մտածեց դրանք իբրեւ ընթերցանութեան նշաններ կիրառել³⁴:

³⁰ ЭМИНЬ Н. О., Объ Армянскомъ алфавите.- Исторія Арміап. Мойсея Хоренского, Москва, 1858, № 363-64, 374-75, 896р. Объ Армянскомъ алфавите.- Исследование и статьи Н. О. Эмина по армянской мифологии, истории и истории литературы (за 1858-1884 гг.), Москва, 1896, № 207-09, 221-22, 896р, Հայկական աշխարհ, 1870. փետրուար, № 42-46:

³¹ Այս առթիւ տե՛ս ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ ԻՍ. նշ. աշխ., № 285:

³² “Вообщем Месроп считается изобретателем армянского алфавита. Справедливее другое мнение, по которому Месроп не изобрель, а только усовершенствовал бывшую не въ всеобщемъ употреблениі, Даниловскую армянскую азбуку и сделалъ ее органомъ распространенія просвещенія и христіанскаго ученія” (Исторія Агванъ Мойсея Каганкатаца, писателя X века, пер. с арм. К. Патканьяна, Санкт-Петербург. 1861, № 326); №¹ և №² M. K. Patkanoff, Recherches sur la formation de la langue Arménienne. Journal Asiatique, tome 16, Septembre, 1870, Paris, № 148-51:

³³ “Also wird das danielische Alphabet nur ein aus dem griechischen umgebildetes gewesen sein”. (H. Hübschmann, Ueber Aussprache und Umschreibung des Altarmenischen, 1876, № 63):

³⁴ “...so ist am wahrscheinlichsten, dass Mesrop weder die armenischen noch die georgischen Zeichen erfunden hat, sondern dass diese Zeichen wie die nordischen Runen als Zeit-

Հայր Բարսեղ Սարգսեանը կարծում է, որ *Մեսրոպը «առեալի միասին զպարսկերենն, զյունարեն և զատրերեն այրութենս, նորակերտել է մի ա'յլ այրութեն, ձևով և դրիւք տարբերեալ ՚ի նոցունց՝ բայց ոչ և այնիւ,,,»³⁵:*

Փիլիսոփայ, գրաքննադատ, մանկավարժ Խահակ Յարութիւնեանն այս խնդրին նուիրուած ընդարձակ մենագրութեան մէջ ցոյց է տալիս, որ «Դանիէլեան կոչուած այրութենը հայոց հին գործածական գիրն էր, սակայն տեղի տալով յունաց, ասորոց և պարսից գրերին՝ մոռացութեան էր տրուել մինչեւ որ նորից գտնուեցաւ և սր. Մեսրոպի և Սահակյա շանիւք կատարելագործուելով՝ կրկին գործածական դարձաւ ամբողջ ազգի համար»³⁶: Նա եղակացնում է, որ Դանիէլեան գիրը յունականից չի ծագել՝ հնում հայերն անմիջականօրէն փիւնիկացիներից կամ ասորաբարելացիներից են վերցրել փիւնիկեան 22 տառը, փոփոխել դրանք ու ազգային գիր դարձրել:

Հայ քննական պատմագրութեան հիմնադիր, փիլիսոփայ, լեզուաբան Անտոն Գարգաշեանը եւս մինչմեսրոպեան գրի առկայութիւնն ընդունողներից է եւ հիմնաւորում է այդ՝ շեշտելով լեզուի ու գրի կապը՝ «Նախ. չենչմարիո այն որ ընդհանրապէս կը կարծուի, թէ Հայք յառաջ քան զՄեսրոպ չունեին նշաններ, ուստի և էին անմասն դպրութենեն: Նայելով հանգամանաց հայերէն լեզուին յառաջ քան զՄեսրոպ՝ անհնար էր լեզուին առանց դպրութեան հասնել յայն աստիճան զարգացման՝ յորում կը գտնենք զնա ի հատակոտոր երգոց վիպասանաց, որոց կատարեալ նմանութիւն է բարգմանչաց լեզուն»: *Մի այլ տեղ նշում է, որ «Ամասեագրութիւնն սկսած էր ի մեզ յառաջ քան զբարգմանիչս, և անշուշտ կար ազգ ինչ գրոյ, թէպէտ դժուարին և անկատար և հազիւ մատչելի սակաւաց ումանց ուսեալ մասնէ ազգին: Արդարեւ*

und Zauberzeichen Erbstück dieser Völker waren, und dass die geistige Erleuchtung, von der Moses Khorenaddzi erzählt, wohl darin bestand, dass dem Mesrop der Gedanke kam, diese Zeichen als Leszeichen zu verwenden...” (K. Faulmann, Illustrirte Geschichte der Schrift. Wien« տարբթեւը չի նշուած. մօս 1880-82. էջ 499):

35 ՍԱՐԳԻՄԵԱՆ Հ. Բ., Տեսութիւն տառադարձութեան խնդրոյն և հայերէն նշանագրոց վերայ. - Բազմավէպ, ՌԵԼԹ-1889-ՌԵԽ, Հու. Խէ, պրակ Ա (թիւ 1-3), էջ 27, տե՛ս նաև ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ ԻՍ., նշ. աշխ., էջ 301:

36 ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ ԻՍ., նշ. աշխ., էջ 240, 309, 329;

առանց գրոյ եւ դպրութեան չէր մարք հայ լեզուին հասանել յայն չափ՝ յորում կը գտնենք զնա իսկ եւ իսկ ի սկզբան գիւտի Մես-րոպեան նշանագրաց»³⁷:

Բնագէտ, փիլիսոփայ, **Մեծ եղեռնին զոհ գնացած նիկողայոս Տաղաւարեանը գրում** է՝ «Հարք ի հնումն... ունեցած են սեպանեւ նշանագրեր (փոփոխեալ ըստ պահանջի իւրեանց լեզուի...), եւ գրականութիւն, որոց մնացորդներն կան ու մնան դեռ ի Հայս, յորս նշանաւոր են վանայ ծովեզերեայ ապառաժից վրայ դրոշմեալ արձանագրութիւններն» եւ **եղակացնում**, որ «արդարեւ՝ հնար չէ որ այդչափ վայիս գրականութիւն ունեցող մի ազգութիւն, յանկարծ դրադարի ուրոյն գիր եւ դպրութիւն ունենալէ, մինչդեռ իւր դրացի անգիր ազգեր իսկ՝ մեծ ընդունկութիւն կ'ընեն նորահնար տառերուն եւ նովաւ գրականութեան կը սկսին»³⁸:

Բանասէր, մանկավարժ Գարեգին Զարքհանալեանը ենթադրում է, որ **հեթանոսական մատենագրական երկերի հեղինակները** «քրմաց դասակարգին պիտի վերաբերէին»: «... անկարելի է անգիր քաղաքականութիւն մը ենթադրել՝ մեր պատմութեանը այն ընդարձակ միջոցին մէջ որ յառաջ քան զգիւտ գրոյն, հաւանականարար մերոնիք ալ իրենց յատուկ գրերը ունենալէն յառաջ դրացի ազգաց տառերը գործածելու սովորութիւնն ունեցած պէտք է ըլլան»: **Իր կարծիքը նա հիմնաւորում** է «հայկական բնեառակերպ գրութիւն»-ներով՝ «երկրին բնակչացը ոչ անծանօթ» **սեպագրերով**³⁹ (ընդգծում՝ - կ. թ.):

Հայոց գրի նախամաշտոցեան փուլերին անդրադառնալով, Հր. Անառեանը բարձր է գնահատել Պ. Ենսենի աշխատանքը՝ «Ամէնէն յաջողը այս փորձերուն մէջ՝ կատարեց գերմանացի Ենսեն գիտնականը, որ այն արդիւնիքին հասաւ թէ հարեանները ուրիշ բան չեն, բայց եթէ Հայոց ազգին նախնիքը, եւ հարերէն արձանագրութիւնները ուրիշ բան չեն ներկայացներ, բայց եթէ հայերէն լեզուին ամենահին վիճակը՝ ամենահին հայկական նշանագրերով»⁴⁰,

37 ԳԱՐԱԳԱՇԵՍՆ Ա. Մ., նշ. աշխ., մասն Դ. Թիֆլիս, 1895, էջ 39, 70.


38 ՏԱՂԱՒՄՐԵՍՆ Ն., Մագումնի հայ տառից. Վիեննա, 1895, էջ 7-8:

39 ԶԱՐՔԱՆԱԼԵՍՆ Գ., նշ. աշխ., էջ 7, 12, 14:

40 ԱՃԱՌԵՍՆ Հ., Հայոց գրերը. Հանդէս Ամսօրեայ, 1910, թիւ 2, փետրուար, էջ 46, Առյնը, Վիեննա, 1928, էջ 4, Առյնը, Երեւան, 1984, էջ 393, 396-97:

քանզի Պ. Ենսենը պնդել է, որ «Այս արձանագրութիւններու հեղինակներն Հայերու նախնիքն են»⁴¹:

Ղետնի Ալիշանը, վկայակոչելով Հայ պատմիչներին, նշում է «Ասորի Դանիել եպիսկոպոսի մը քով հին հայերէն գրեր կային»⁴², իսկ արդէն 1901 թ. գրում է «Այն ատեն հայերէն լեզուի գիր կա՞ր թէ ոչ.- հաւանիմք թէ որ եւ է կերպով կար գիր մի, բնիկ կամ օտարի, եւ մանաւանդ նշանագիր»⁴³: Իսկ մինչ այդ նա հրատարակել էր մի արձանագրանդակ՝ Տաւրոսի Ալաճա գիւղից, եւ մեկնաբանել իբրեւ «նորանշան մնացուած վաղիմի ժամանակաց եւ ազգի անծանօթի... նշանագիր երեսի քան ձայնագիր»⁴⁴: *Մի իթարեան միաբան Հայր Աւգերը, վերահրատարակելով այն, համարել է «Հեթեան արձանագրութիւնք»*⁴⁵ (նկ. 2):



Նկար 2

Ականաւոր Հայագէտ Մեսրոպ մադիստրոս եպիսկոպոս Տէր-Մովսէսեանը եւս յարում է Գարագաշեանի կարծիքին, որ Աստուածաշնչի Հայերէնի բարձր զարգացածութիւնը հետեւանք է նախկինում գրաւոր լեզուի առկայութեան:

Մի այլ աշխատանքում նա, փաստօրէն, արձանագրում է Հայաստանում առաջին ժայռապատկերի յայտնաբերումը, ներկայացնելով այն իբրեւ գրութիւն: «1902 թուին մի քանի սինօդականների

⁴¹ P. Jensen, Hittiter und Armenier, Strassburg, 1898: Հայերէն թարգմանութիւնը՝ Հիտտիտներն ու Հայերը, ի պրոֆ. Պ. Ենսենին. Հանդէս Ամսօրեայ, 1898, թիւ 8-9, օգոստոս-սեպտեմբեր, էջ 227.

⁴² Ղ. ԱԼԻՇԱՆ, Հայապատում, Պատմիչք եւ պատմութիւնք հայոց, Վենետիկ, Ա-8ԾԱ - 1901, էջ 21.

⁴³ Ղ. ԱԼԻՇԱՆ, Ցուշիկք հայրենիաց հայոց, Հա. 1, Վենետիկ, 1869, ԺԳ. էջ 324:

⁴⁴ Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 134-36, նկ. 33.

⁴⁵ Հ. Յ. ԱՒԳԵՐ, Դասեր Հայոց եւ Հայաստանի հնագոյն պատմութեան. Բազմավագ, 1912, թիւ 7-9, էջ 300.


⁴⁶ ТЕРЬ-МОВСЕСЯНЪ М., Исторія перевода Библію на армянський языкъ, Санкт-Петербург, 1902, էջ 15, 21, 25:

հետ գնացինք Սեւզուր գետի աղբիւրները տեսնելու: Հայ Զէյվա գիւղի բնակիչներից ինձ պատմեցին, որ Կզլքափա կամ Կարմիր թլուր բարձրութեան վրայ կայ մի տեսակ օտարուի գրութիւն, որ ոչ ոք չի կարողանում կարդալ...: Գրութիւնը բաղկացած է խորհրդանշաններից, իրար հետ սերտ շաղկապուած եւ մի քանի անգամ կրկնուած...: Արդեօ՞ք դա հիտիտական գրութիւն չէ»⁴⁷ (իոս-քը Մեծամօրի մասին է - կ.թ.):

Մեծամօրի այս ժայռապատկերը յետագայում նկատել է Փիգի-կոս, պրոֆ. Հ. Անժուրը եւ 1936 թ. տեղեկացրել ականաւոր հնագէտ Աշխարհեակ Քալանքարին, որն այն մեկնաբանել է որպէս Արագածոտնի նախնադարեան ուռոգման համակարգի քարտէց⁴⁸: 1938 թ. հնագէտ Եւգենի Բայրուրդեանը բլրի գագաթնային մասում նկարագրել է «հիերոգլիֆիկ» գրեր⁴⁹: Փորագրուած քարտէցն արտանկարուել ու հրատարակուել է 1961 թ.⁵⁰, չափագրուել եւ լուսանկարուել՝ 1973 թ.⁵¹: Ներկայացուած գծանկարը՝ ըստ Մ. Մ. Խաչատրեանի աշխատութեան⁵² (նկ. 4): Նկար 5-ը եւ 6-ը մեծամօրեան մեհենագրեր են:



Նկար 3



Նկար 4

⁴⁷ ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ Մ., Արարատի եւ Արագածի գագաթներին.- Արարատ, 1913

- Ա.ՑԿԲ, թիւ 1, էջ 65-66:


⁴⁸ ԽԱՉԱՏՐԵԱՆ Մ. Մ., Արագածոտնի նախառարարտական ջրարաջնական համակարգի փորագրուած գծագիրը.- Պատմա-բանահրական հանդէս, 1971, թիւ 3, էջ 128:

⁴⁹ ՏԵ՛՛ ԽԱՆՁԱԴԵԱՆ է. Վ., Կ. Թակորի. ՄԿՐՏՉԵԱՆ, ՊԱՐՍՍՄԵԱՆ է. Ս. Մեծամօր, Երեւան, 1973, էջ 5:

⁵⁰ ԲԱՐՄԵՂԵԱՆ Լ. Ա., Հայոց գիրը Մաշտոցից շատ առաջ.- Գիտութիւն եւ տեխնիկա, 1964, թիւ 3, էջ 49, նկ. 1:


⁵¹ ԽԱՆՁԱԴԵԱՆ է. Վ., ..., նշ. աշխ., էջ 153, 155, նկ. 154, աղ. XXX-6:

⁵² ԽԱՉԱՏՐԵԱՆ Մ. Մ., նշ. աշխ., նկ. 4:




Նկար 5


Մեհենագրեր են երեւում նաեւ Արագածոտնի մարզի Կաքաւաձոր գիւղից հիւսիս գտնուող երկաթիղարեան բնակատեղիի տարածքում պահպանուած տուֆէ քարամակերեսին⁵³ (նկ. 7):



Նկար 6



Նկար 7



Նկար 8

Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանը, հրատարակելով Ցոլակերտի նորայայտ արձանագրութիւնը (նկ. 8), ենթադրել է, որ «այս նշանագրերը առընչութիւն ունեն հարեան գրերի հետ»⁵⁴, վկայակոչելով Հ. Անառեանի վերոյիշեալ յօդուածի՝ հաթեան նշանագրերի մասին հատուածը:

Արեւելագէտ, հայագէտ, բանասէր, լեզուաբան, աշխարհագրագէտ Եղիշեան Մարկուարտն ինքնին հասկանալի է համարում, որ

⁵³ ԽԱՆՁԱԴԵԱՆ Ե. Վ. . . . , նշ. աշխ., էջ 151-152, նկ. 151:

⁵⁴ ՍՄԲԱՏԵԱՆ ՄԵՍՐՈՊ ԱՐՔ., Ցոլակերտի քերդը.- Արարատ, 1910 = ՌՅՇԹ, թիւ 6, էջ 575-76:

«նախքան հայ ազգային գրերի գիւտը գոնէ արքունիքը կարիք է ունեցել դիւանատան...»: Գրադրութեան հաւանական լեզուն պարսկերէնն էր: Նա գտնում է, որ Դանիէլեան գրերը, որ իրենց հերթին ծագում էին ուրիշ՝ նոյնիսկ հնացած տառատեսակներից, «հայերէնի համար իրական եւ կատարեալ այլուրենի վերածուեցին միայն Մաշտոցի կատարած փոփոխութիւնների եւ ընդլայնումների միջոցով», այն է՝ յունարէնի վանկային համակարգին նմանեցնելով՝ ձայնաւորների աւելացմամբ եւ տառերի յունական անփոփոխականութիւնը՝ անսայթաքութիւնը ներմուծելով: Մարկուարտն, այսպիսով, մերժում է Մեսրոպեան գրերի յունական եւ իրանական-սեմական ծագման այլոց տեսակէտները⁵⁵.

Գրիգոր Ղափանցեանը Արագածի ժայռապատկերների մասին նշում է, որ դրանք «մարդկութեան զարգացման ամենաառժեղ գործօնի՝ գրի՝ մարմնացած յաւակներն ու ռահայորդներն են բարի վերայ. սրանք զանազան առարկաների պատկերացումներ են, մեծ մասմբ ինչ որ աղեղնաւոր չորքուանու»⁵⁶ (Ալ. 9, 10):



Նկար 9



Նկար 10

Լեռն եւս համոզուած է, որ եղել է նախամեսրոպեան գրականութիւն՝ «Կարելի է, ուրեմն, աւելի մեծ հաւանականութեամբ ենթադրել որ հայկական նշանագրեր, գոյութիւն ունեին իին ժամա-

⁵⁵ Jozef Marquart, Über den Ursprung des armenischen Alphabets in Verbindung mit der Biographie des heil. Mastoc (Պատմութիւն հայերէն նշանագրերու եւ վարուց Ս. Մաշտոցի), գերմ. եւ Հայերէն բնագրեր. Հանդէս Ամսօրեայ, 1911, էջ 529-44, 673-84, 1912, էջ 41-54, 199-216, 657-60, ե. ՄԱՐԿՈՒՆԻՏՏ, Հայոց այրութենի ծագումը եւ Մաշտոցի կենսագրութիւնը. ՄՄՀ, 1962, էջ 127, 130, 147, 177, 151, 130-34:

⁵⁶ ՂԱՓԱՆՅԵԱՆ ԳՐ. Հնութեան մի բանի յիշատակարաններ.- Արարատ, 1914 = ՌԵՎԳ, թիւ 1, էջ 95: Ժայռապատկերի արտանկարը տե՛ս ԲԱՐՍԵՂԵԱՆ Լ. Ա., Նոր Աիւրեր Հայաստանի հնագոյն շրջանի արուեստի վերաբերեալ.- Պատմաբանասիրական հանդէս, 1966, թիւ 3, էջ 148, նկ. 1, 3: Լուսանկարն արուած է 1992 թ., տրամադրել է Հնաբուսաբան Խւամ Գաբրիէլեանը:

նակներից եւ նրանց ցուցակը գտնում էր Դանիել սիրիացու մօս պատահարար: Մենք դեռ Արտաշիսեան հարստութեան ժամանակներից տեսանք, որ հայ պետութիւնը չէր կարող առանց դպրոցական դաստիարակութեան զարգանալ, բանի որ մի երկիր էր դա, ուր բազմակեզդ ցեղեր կային, որոնք հայցուեցին, պետական մի ամբողջութեան մեջ ռուլուեցին յատկապէս հայերէն լեզուի միջոցով: Որ հայ ժողովուրդը պիտի ունենար իր գրականութիւնը, որը թելադրում է ասել եւ նրա լայն տարածուած ու ներքնապէս զարգացած հերանոսական պաշտամունքը: Եւ վերջապէս նոյնիսկ կորիւնն ու Ղազար Փարպեցին էլ շատ մուր ակնարկներով յիշատակում են «վաղնջուց» գոյութիւն ունեցած հայկական նշանագրերը: ...Թոյլատրեկի է անգամ մտածել որ Մաշրուց իմքը հնչիւններ հաղորդեց Դանիելից ստացած գրերին...»⁵⁷:

Վալերի Բրիւտովն, ըստ հայ պատմիչների երկերի ուսումնասիրութեան, բնական է համարում, որ նախքան Մաշտոցի գիւտը հայերէն գրում էին, նաեւ նշում, որ «Հայաստանի մեջ կային կազմակերպուած օրինաւոր դատարաններ: Երբեմն ալ կը կատարուեր ազգահամար»⁵⁸:

1927 թ. հոկտեմբերի 14-ին Ա. Տէր-Աւետիսեանի պեղումներով յայտնաբերուել է Արմաւիրի խոյաձեւ արձանագրութիւնը⁵⁹ (նկ. 11), որի արտանկարը հրատարակել է Աշխարհքեկ Քալանք-արք⁶⁰ (նկ. 12): Յայտնաբերողն այն համարել է նախառարարական շրջանի: 1951 թ. այն գեռ տեղում էր եւ անմինաս⁶¹, իսկ 1964 թ. քարն արդէն չը-

⁵⁷ Լեռթ, Պատմութիւն հայոց, Հայ. Ա. Հին պատմութիւն, Թիֆլիս, 1917, էջ 682-84, Լեռթ, Երկերի ժող. 10 հատորով, Հայ. 1, Երևան, 1966, էջ 507-08:

⁵⁸ "... в Армении было организовано правильное судопроизводство. ...производилась перепись населения. Естественное думать, что армяне писали по-армянски, только пользуясь алфавитом чужого языка" (БРИОСОВ В. Я., Летопись исторических судеб армянского народа, Москва, 1918, № 48-50, նոյնը, Ереван, 1989, № 75-76, ԲՐԻՒՆՈՎ Վ. ԵԱ., Տարեգրութիւն հայ ժողովրդին պատմական նակատագրին, թարգմ. ռուս. բնագրէն Հ. Յ. Վարդարեան, Վենետիկ-Ա. Ղազար, 1931, № 104-105):

⁵⁹ ТЕР-АВЕТИСЯН С. В., Археологическое обследование городища и крепости "Древний Армавир". - Գիտական ժողովածու, նույնուած Հայաստանում սովորական իշխանութեան հաստատման 20-ամեակին, Երևան, 1941, № 62-64:

⁶⁰ KALANTAR AŞ., Inscriptions D'Arménie en caractères inconnus. *Revue Archéologique*, Paris, 1929, № 43-44:

⁶¹ ТРЕВЕР К. В., Очерки по истории культуры древней Армении. Москва-Ленинград, 1953, № 118:

կար⁶²: Ներկայացուած գծանկարն արուել էր ըստ Արտաշէս Վրոյ-
րի՝ 1932 թ. լուսանկարի:




Նկար 11



Նկար 12

Հեզուաբան, հնագէտ, ուղարտագէտ Խւան Մեշչանինովի կարծիքով, սեպագիրը «քնար էլ անդրամիկ գրութիւնը չէր տեղում: Ինձ թւում է, այն դուրս չի մղել տեղական գրային համակարգը ... որը շարունակում էր գոյութիւնը նաև սեպագրի օրօֆ»⁶³: Որպէս ասուածի հաստատում, նա ներկայացրել է Արցախի Տանճառափ (վերանուանուած էր Խոջալու) գիւղի մօտի դամբարանադաշտի, դեռևս 1896 թ. Ե. Ռյուզերի պեղումներից յայտնի արձանագրութեան արտանկարը, ինչը 1926 թ. հետագօտել է ինքը⁶⁴ (նկ. 13):




Նկար 13

⁶² ԲԱՐՄԵՂԵԱՆ Լ. Ա., Հայոց գիրը ..., էջ 50:

⁶³ “Мне кажется, что клинопись – халдское новшество с ассирийской почвы – была в употреблении лишь у дворцовой знати и вовсе не является первым письмом на месте. Она же, думается мне, вовсе не вытеснила местной системы писания, существовавший до иноземного заимствования и продолжавшейся не в меньшей степени и при нем самом” (МЕЩАНИНОВ М. М., Закавказские иероглифы.- Сообщения Гос. Академии материальной культуры, 1932, № 3-4, էջ 55):

⁶⁴ МЕЩАНИНОВ М. М., նշ. աշխ., էջ 52-53. МЕЩАНИНОВ М. М., Загадочные знаки Причерномория.- Известия ГАИМК, Ленинград, 1933, № 62, նկ. 20, 21, էջ 54-55:



Նկար 14

Ամերիկահայ գիտնական Գէորգ Սարաֆեանը շեշտում է դպրութեան վճռորոշ դերը թէ՛ նախաքրիստոնէական եւ թէ քրիստոնէական մտածելակերպի ու հաւատքի ձեւաւորման եւ զարգացման խընդրում⁶⁵:

Մշակութաբան, ազգագրագէտ Խաչիկ Սամուելեանը, խօսելով գրի նախապետական փուլերի մասին, Արագածի «հիերոգլիֆեան տիպի իւրայատուկ նշանագրերի» առթիւ նշում է, որ դրանք «զուտ տեղական բնոյք են կրում: ...շատ անգամ ունեն սոսկ գծային ձեւ եւ ներկայացնում են հաւանօրէն գաղափարական (իդեոգրաֆիկ) նշանակութիւն...»: Դրանց օգնութեամբ «արխայիկ դարերի մարդը նիւթական ձեւաւորումով արտայայում էր իր գաղափարներն ու մտայդացումները»: Յոլակերտի արձանագրութեան օրինակով նա ցոյց է տալիս հայոց գրի զարգացման փուլերի շարունականութիւնը՝ «պիկտոգրաֆիկ նշանագրերը յայտաբերուել են պատմականօրէն այնպիսի նշանաւոր վայրում, ուր կիկլոպեան ամրոցի մնացորդները մեզ տանում են դէպի նեղլիքեան կուլտուրան, իսկ խալդական սեպանի արձանագրութիւնները՝ դէպի հին Հայաստանի նախապատմութիւնը՝ բրոնզէ ու վաղագոյն երկարէ դարերը: Այստեղ հարկ է նշել, որ ընդհանրապէս այծի կամ այծեամի գծաւոր նկարները, այն է՝ «իդագրերը» - բնորոշ պիկտոգրաֆիկ նշաններ են ու շատ մեծ բուռվ են տարածուած Հայկա-

⁶⁵ “... there existed some sort of formal education for the training of leaders among the upper strata of Armenian society during the pagan period. The strongholds of the old worship could not be destroyed in one day, or even in one century, by sheer physical force, without the assistance of a more potent factor, education, as an instrument of conscious evolution” (History of Education in Armenia by KEVORK SARAFIAN, California, 1930, § 29):

կան լեռնաշխարհի հնավայրերում»⁶⁶: Նման նշանների կամ մեհենագրերի վառ օրինակներ կան Արագածոտնի մարզի Շամիրամ գյուղի երկաթիդարեան դամբարանների քարերին⁶⁷ (նկ. 14):

Արեւելագէտ, Հայագէտ, լեզուաբան Նիկողայոս Մատի Համոց մամբ, Հայաստանում մայրենի լեզուով գիր կար տակաւին մեր թուականութիւնից մի քանի դար առաջ. «Ողջ Կովկասը, ներառեալ Հայաստանը, քաղաքակիրք էր դեռեւս ասորա-բարեկական ժամանակներում»⁶⁸:

Աշխարհեկ Քալանքարն, ըստ առկայ Հնագիտական նիւթի եւ Արագածում իր յայտնաբերած ժայռապատկերների ուսումնասիրման, իրաւացիօրէն եզրակացնում է՝ «Մի այլ կարեւոր երեւոյթ, որ բնորոշիչն է ու չափանիշը Հայաստանի այդ հնագոյն կուլտուրայի՝ - գիրն է, գրի գոյութիւնը, որ ունեցել է Հայաստանի բնակիչն այդ հեռաւոր անցեալում։ Մեզ բախտ վիճակուեց պարզել ոչ միայն հնագոյն գրի գոյութիւնն Արագածի վրայ, այլև նրա մեծ տարածումը խորհրդային Հայաստանի բազմաթիւ այլ վայրերում, ներկայացուած գրի զարգացման մի շարք էտապներով՝ սկսելով ժայռափորումների եւ ժայռագրութիւնների ամենապրիմիտիվ օրինակներից, մինչեւ հիերոգլիֆեան գրի կազմակերպուած սիստեմը, որ իր խոշոր չափերով նախնական հարուստ գրականութեան ներկայութիւնն է յայտաբերում Հայաստանում»⁶⁹:

Հնագէտ-բանասէր Սենդրակ Բարխուդարեանը եւս փաստում է դրի զարգացման մինչմեսրոպեան փուլերի լայն կիրառումը՝ «...Հայաստանի բնակիչ ցեղերը հնչարտարեական գիր չունեին, այլ ունեին միայն գաղափարագրեր։ ...Առաջին անգամ պատմական րուն

⁶⁶ ՍԱՄՈՒԵԼԵՍՆ Խ., Հիմ Հայաստանի կուլտուրան, Հա. II, Երեւան, 1941, էջ 187, 190, սեպ նաեւ Հա. I, Երեւան, 1931, էջ 160-63:

⁶⁷ МАРТИРОСЯН А. А., Исследование пещер в ущелье реки Раздан и на скальных изображениях в гегамских горах и Шамираме.- Археологические Открытия 1969, Москва, 1970, էջ 384:

⁶⁸ «Весь кавказский район, со включением Армении, был культурен еще в эпоху ассирио-аввилонской цивилизации. В Армении была местная письменность, на родном языке, еще за несколько веков до н.э.» (МАРР Н. Я., Ани, Книжная история города и раскопки на месте городища.- Известия ГАИМК, Москва-Ленинград, 1934, էջ 5):

⁶⁹ ԱՇԽ. ՔԱԼԱՆՔԱՐ, Արագածը պատմութեան մէջ. Ակնարկ նրա պատմական նշանակութեան եւ Գիրական կուլտուրայի յուշարձանների մասին, Երեւան, 1935, էջ 62, 73:


Հայաստանի տերիտորիայի վրայ երեւան եկաւ հնչարտաքրական գիրը, խալդական պետութեան շրջանում։ Գիր եւ գրականութիւնը այդ սկզբնական շրջանում մասսայական բնոյր չէին կրում։ *Ամփոփելով քննութիւնը, նշում է՝ «Հայաստանում գրի զարգացման այդ ընդհանուր երեւ հիմնական աստիճաններն եւ երեւան են գալիս եւ բոլորից եւ մենք ունենք փաստացի նիւթեր»⁷⁰ (խոսքը գաղափարագրի, վանկագրի եւ օտար՝ արամէա-յունա-հռոմէատառ գրերի մասին է՝ - Կ. թ.):*

Յովսէփ Օրբելին Սեւանի աւագանում Երուանդ Լալայեանի (Գեղարքունիքի մարզ, գիւղ Կարմիր, 1906 թ.) եւ Սեղրակ Բարխուդարեանի (Գեղարքունիքի մարզ, գիւղ Գեղհովիտ, 1932 թ.) յայտնաբերած արամէատառ սահմանաքարերի կապակցութեամբ հաղորդում է, որ դրանց լեզուն հայերէնն է⁷¹։ Վերծանողը՝ Ա. Եա. Բորիսովը գտնում է, որ մ.թ.ա. Բ. դ. այդ արձանագրութիւնների «իմնական լեզուն, չնայած երանց մէջ հանդիպող արամէական բառերին, չի կարող արամէական լինել» եւ ենթադրում, որ «քնականօրէն հին հայկական լեզուն պետք է լինի այն ձևով, որը գործածուել է... հայկական ամենահին տեքստերից ամբողջ հինգ դար առաջ։ ... Հայաստանի հնագոյն թագաւորները, յունական գրի հետ միասին... գործածել են նաև հին արամէական գիր»⁷² (Ըկ. 15):

⁷⁰ ԲՈՐԻՍԻԴԱՐԵԱՆ Ս. Գ. Խորհրդային Հայաստանի Արքական կուլտուրայի յուշարձանները, Երեւան, 1935, էջ 49-50, 58:

⁷¹ «Сделанные семитическим шрифтом надписи эти должны читаться по-армянски. Содержание надписей... соответствуют рассказам армянского историка Моисея Хоренского... Надписи представляют выдающийся интерес. Они подтверждают сведения древних армянских историков о том, что до изобретения в V в. Армянского алфавита армяне пользовались семитическим письмом. ...Открытие... позволяет заявить, что хачало армянской письменности относится не к V веку н.э., а ко II веку д.н.э., т.-е. Армянская культура является еще более древней, чем предполагалось до сих пор» (ՕՐԵԼԻ Ի. Ա., Расшифровка древних надписей.- «Известия», թիւ 25 (7401), 31.01.1941, Москва, էջ 4):

⁷² Պրֆ. ՊՈՐԻՍՈՎ, Հայաստանի Արտաշէս թագավորի արձանագրութիւնները. «Սովորական Հայաստան» օրաթերթ, թիւ 39 (6148), 16 փետրուարի, 1941, էջ 3, БОРИСОВ А., Надписи Артаксия (Артшеса), царя Армении.- ВДИ, 1946, թիւ 2, էջ 97-104: Նշեմ, որ առաջիօր յայտնաբերուած է նման մօլ 15 սահմանաքար:



Նկար 15

Բանասէր, արուեստաբան Գարեգին Լեւոնեանն ուշադրութիւն հրաւիրելով «տարիներ առաջ, արտասահմանեան ամսագրերից մէկում» հրատարակուած «հայկական հին բարձրաքանդակի» վրայ (նկ. 16), որը ներքեւի մասում ունի նաեւ Հայերէն երկու տող (նկ. 17), մի շարք ենթադրութիւններ է անում՝ «Կարելի է ընդունել, որ Քանդակապատկերն իսկապէս հեթանոսական դարերի գործ է: ... բայց ի՞նչպէս հաշտեցնել այստեղ հայերէն գրերի առկայութիւնը, մի՞թէ ուրեմն պիտի ընդունենք նրանց գոյութիւնը Մեսրոպից առաջ, կամ եթէ իրօֆ Դանիէլեան կոչուած գրերն են դրանք, ինչո՞ւ են գրուած ձախից աջ եւ ոչ աջից ձախ»⁷³:



Նկար 16

Նկար 17

Ցաւօք, հեղինակը չի նշել ամսագրի անուանումը եւ թուականը. առայժմ հնարաւոր չէ ուսումնասիրել գրեթէ անընթեռնելի այդ գրութիւնը: Լրացուցիչ մանրամասներ է հաղորդում Գրիգոր Ղա-

⁷³ ԼԵՒՈՆԵԱՆ Գ. Զ., Մի առեղծուածային Քանդակապատկեր.- Սովետական արուեստ, 1941, թիւ 2-3, էջ 70: Քանդակապատկերի գրակիր մասի ներկայացուած պատկերը (նկ. 17) փորձել եմ հնարաւորինս ընթեռնելի դարձնել համակարգչային մշակմամբ:

փանցեանը, նշելով, որ գտածոն Անդրկովկասից է, եւ որ տողերը գրուած են հայկական եւ վրաց «խուցուրի» տառերով⁷⁴:

Բանասէր, Արշակ Ալպոյանեանն ընդունում է, որ եղել է նախամեսարոպեան գիր-գրականութիւն, կարեւորելով դրա գերը ուսուցման եւ գիտութեան ոլորտում՝ «Հայաստանի մեջ տեսնուեցաւ, թէ ամոնք մեհենական արձանագրութիւններ ունեին՝ օտար, մասնաւրապէս յոյն լեզուով, ինչ կը նշանակէ թէ նոյն լեզուն կը սորվէին: ...մեծ վատահութեամբ կրնանք ըսել, թէ Հայերը, Քրիստոնեութենէն առաջ ալ, որոշ չափով մը հետամուտ եղած են ժամանակի պահանջներուն համաձայն ուսումներու եւ գիտութեանց... »⁷⁵:

Թատերագէտ Գէորգ Գոյեանը եւս ընդունում է մինչմեսարոպեան գրականութիւն գոյութիւնը, շեշտելով հայոց դիցարանում դպրութեան աստծոյ առկայութեան փաստը⁷⁶:


Արեւելագէտ Կամիլա Տրեւերը եւս արտայայտում է յօդուոտնախամեսարոպեան գրականութեան գոյութիւնը, նշելով նաև յայտնի օտարատառ արձանագրութիւնների թիւը⁷⁷ (նկ. 18, 19):

⁷⁴ КАПАНЦЯН ГР., О каменных стелах на горах Армении, Ереван, 1952, էջ 38:


⁷⁵ ԱԼՊՈՅԱՃԵԱՆ Ա. Ա., Պատմութիւն հայ լպրոցի, Գաւիրէ, 1946, էջ 14-15:

⁷⁶ “бог Тир называется “писец” (!) Арамазда по науке и искусству. Какими же знаками писал этот армянский “писец” бога солнца?”. “И до Маштоца, то есть до V века, существовала письменность на армянском языке... В те времена армянская речь вообще записывалась арамейскими и греческими буквами! (ГОЯН Г., 2000 лет армянского театра, т. I – Театр древней Армении: по памятникам материальной культуры и древним текстам, Москва, 1952, էջ 434, 450):

⁷⁷ “Так как армяне до конца IV в.н.э. не имели своего алфавита, им приходилось пользоваться чужим письмом, алфавитами соседних народов, с которыми они были политически или культурно связаны. Таким чужим письмом, бывшим в употреблении у армян, являлось сначала письмо арамейское, а затем и греческое и парфянское... От древнего периода Армении до нас дошли три надписи арамейским письмом, двенадцать греческих, а кроме того, пять ла-тинских надписей”. “У нас нет решительно никаких данных для предположения, что в Армении II в. до н.э. мог быть в ходу арамейский язык. Самый строй семитического языка настолько отличен от древнеармянского, что трудно предположить возможность его распространения среди населения” (ТРЕВЕР К. В., նշ. աշխ, էջ 99-100, 171):



Նկար 18



Նկար 19

Զեիս գրաբան Զեստմիք Լոռւկոտկան նշում է, որ «Մեսրոպ Մաշտոցի այրութենը իր ժամանակի ամենակատարեալ հեջնարանուած գիրն է»⁷⁸:

Գրականագիտ Առաքել Առաքելեանը նշում է, որ «Պաշտօնական յունական լեզուին ու գրերի գործածութեանն առընթեր Հայաստանում գոյութիւն է ունեցել հայկական մեհենական գիրը, որը գործածութեան մէջ է եղել մեհեաններում, քրմական դասի կողմից: ...Յունարենին գուգահեռ Հայաստանում գոյութիւն են ունեցել Դանիէլեան նշանագրերը...»: Եւ եզրակացնում, որ Մեսրոպեան գրերից առաջ թէ՛ հեթանոսական եւ թէ՛ քրիստոնեայ Հայաստանում «գոյութիւն է ունեցել 2 տեսակ գիր՝ ա) տեղականը, մայրենին, հայկականը, որ հայ ժողովրդի սեփական ստեղծագործութեան արդիւնքն է եղել ու մասսայականը, հասկանալին եւ բ) յունականը...»⁷⁹:

Պատմաբան Հայկաց ժամկշեանը եւս կողմնակից է նախամեսրոպեան օտարակեզու գրականութեան գոյութեանը, նշելով, որ «Հայերը օգտագործել են պարսկական եւ յունական տառեր»: Խակ 1975 թ. գրում է՝ «Առանձին ուսումնասիրողներ, հիմնուելով այս նշանագրերի (խօսքը Յոլակերտի արձանագրութեան մասին է, որ գտնուել է Արարատի հիւսիսային ստորոտում, Մեծ Հայքի Ալրարատ աշխարհի 12-րդ՝ Մասեացոտն գաւառի Դաշբուռուն գիւղի մօտ՝ ամրոցի աւերակներում - կ. թ.) եւ Խորենացու վկայութիւնների վրայ, ենթադրում են, որ դեռևս մեր քուականութիւնից մի քանի դար առաջ Հայաստանում գոյութիւն են ունեցել հայկական մեհենական նշանագրեր: Եթէ իրօք գոյութիւն են ունեցել հայկական

⁷⁸ ՀՈՌԻԿՈՏԿԱ. Զ., Գրի զարգացումը, թարգմ. Լ. Նազարեան, Երեւան, 1955, էջ 182, **ЛОУКОТКА** Վ., Развитие письма, Москва, 1950, էջ 157, **LOUKOTKA CESTMÍR**, Vyvoj písma, Praha, 1946:

⁷⁹ ԱՌԱՔԵԼԵԱՆ Ա., Աշխատանքներ, էջ 211-212:


մեհենական նշանագրեր, ապա պէտք է կարծել, որ դրանք մաս-սայական գործածութեան համար չեն եղել, այլ, ինչպէս Եգիպտոսում եւ այլ երկրներում, ունեցել են կաստայական բնոյք, դը-րանց ծանօթ են եղել միայն քրմերը եւ դրանցով գրուել են բա-ցառապէս կրօնական գրեր եւ մեհենական տարեգրութիւններ: Հայերէն լեզուով աշխարհիկ բովանդակութիւն ունեցող երկեր, բա-նաստեղծութիւններ, երգեր, նամակներ եւ զանազան գրութիւններ գրելու համար հայերը օգտագործել են արամեական, պարսկական եւ յունական տառերը»⁸⁰:

Լեզուաբան Գուրգէն Սեւակը բացասման եղանակով է ապա-ցուցում նախամաշտոցեան գրի գոյութիւնը՝ «Անկարելի է պատ-կերացնել, որ արդէն այդ ժամանակ դարաւոր մշակոյթի տէր, պե-տականութիւն, քաղաքներ, արուեստներ եւ առեւտուր ունեցող ժո-ղովուրդները (Հայ, վրացի եւ աղուան՝ - Կ. Թ.) չունենային իրենց գրչութիւնն ու դպրութիւնը թէկուզ եւ օտար՝ ասորական, յունա-կան, պարնկական գրերով կամ նրանցից սերուած նշանագրերով: ...Գուցէ այդ ժողովուրդները, կամ նրանցից որեւէ մէկը, նա-խորդ ժամանակաշրջանում... երկարատեւ գործածութեան հետե-ւանելով առաջացած բնական ձեւափոխութիւնների շնորհիւ արդէն հասել էին հնչմամբ եւ ձեւով այլ ժողովուրդների այրութեննե-րին այլեւս չհամապատասխանող... ինքնուրցն գրերի մակարդա-կին...»⁸¹: Դանիէլեան գրելն իբրեւ նախատիպար ու սկզբնատարը են ծառայել մեսրոպեանի համար եւ ծագել են հարաւ-արաբական-արամէկական աղբիւրից: Այդ գիրը «քնաւ էլ անհետք չմնաց հայ իրականութեան մէջ. իբրեւ տառային ոճ, տառապատկերների հա-մակարգ, անշուշտ նաեւ ատաղճ, նա թափանցեց մեսրոպեան այ-րութենի մէջ»: Այսինքն՝ Հայոց այրութենի ակունքը «գտնւում է ո՛չ թէ մերձաւոր յունա-ասորա-պարսկական միջավայրում ... ա՛յլ ժա-մանակով եւ տարածութեամբ հեռաւոր փիւնիկ-սեմական ... գրե-րի ոլորտում...»: Նա համարում է, որ Մեսրոպի մեծութիւնն այն է, որ «դանիէլեան գիրն ընդունելով իբրեւ հայկական գրչու-

⁸⁰ ԺԱՄԿՈՂԵԱՆ Հ. Գ., Հայաստանը նախնադարեամ-համայնական հասարակու-թեան և սորկատիրութեան շրջանում, պրակ 1, Երեւան, 1961, էջ 330, Այլթ, Գրականութիւնը և պատմագրութիւնը. Հայ ժողովրդի պատմութիւն, Երեւան, 1975, էջ 193:

⁸¹ Գ. ՍԵՒԱԿ, Մեսրոպեան գրելը. նրանց կառուցուածքի սկզբունքները և աղբիւր-ները. ՄՄՀ, 1963, էջ 193, 205:

թեան նախադրեալ ու հիմք՝ նա կարողացաւ վերամշակել այն եւ կատարելագործել ժամանակի ամենաառաջաւոր դպրութեան՝ յունական գրի սկզբունքներով ու տեխնիկայով»⁸²: Ներկայացուած է ամիսարական այբուբենի մի տառ եւ դրա նման մի ժայռապատկեր (նկ. 20):



Նկար 20

Սեպադրագէտ նշան Մարտիրոսեանը եւս հայոց մէջ մինչմես- րոպեան գիրն ընդունողների թւում է⁸³:

Գրականագէտ Մկրտիչ Մկրեանը հաւանական է համարում, որ «Եթէ նոյնիսկ հեթանոսական (անտիկեան) շրջանում հայերէն լեզուն գործածուել է իրեւ գրական լեզու, մի քան, որ շատ հաւանական է, եթէ երբեք հեթանոսական մեհեաններում քրմերը ունեցել են ինչ-որ «մեհեանական մատեաններ» կամ գըրեկ են տարեգրութիւններ եւ պատմագրութեան բնագաւառը յիշեցնող նման գործեր, որ դարձեալ անհաւանական չէ, այնուամենայնիւ, փասոր մընում է փաստ, որ Հայաստանում քրիստոնեութեան մուտքից յետոյ՝ հարիւր տարօւց աւելի մի ժամանակամիջացում պաշտօնապէս գրական-գործածական լեզուներ էին դարձել յունարէնը եւ ասորէրէնը»⁸⁴: Իսկ մէկ տասնամեակ անց արդէն, առաւել որոշակիացնում է «իրօֆ, իին ժամանակներում էլ պէտք է հայերէնը գրաւոր գործածութիւն ունեցած լինէր»: «Բոլոր դէպէրում մի քան փաստ է, որ քրիստոնեութեան մուտքից առաջ, հեթանոսական ժամանակներում, առաջին հերթին մեհեանական կենտրոններում գոյութիւն է ունեցել քաւական լաւ զարգացած գրականու-

⁸² Գ. Սեհմակ. Մեսրոպ Հայկական գրերի ու մատեագրութեան սկզբնաւորումը, Երեւան, 1962, էջ 52, 54:

⁸³ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Ն. Ա.. Սեպագրի կիրառումը մեր նախնեաց մօս՝ Ս. Մեսրոպ պէմ առաջ.- Մարմարա, Կ. Պոլիս, 1963, 22, 23 յունուարի:

⁸⁴ ՄԿՐԵԱՆ Մ. Ա. Հիմգերորդ դարի հայ պատմագրութիւնը.- ՄՄՀԺ, Երեւան, 1963, էջ 136:

թիւն»: «Այսպիսով, ըստ կրեւոյթին, քրիստոնեութեան ընդունելուց յետոյ, մինչեւ Մեսրոպ Մաշտոցի մեծագործութիւնը, մօտ հարիւր տարի Հայաստանում դադարում է հայերենի գրաւոր գործածութիւնը, իսկ բովանդակութեամբ հեթանոսական կրօնի հետ կապուած ձեռագրերը ոչնչացնում են կամ ինքնաստինեան ոչնչանում՝ պարբերաբ չարտագրուելու հետեւանդենվ»: Մ. Մկրեանը հաւանական է համարում, որ Դանիէլեան գրերը «հեթանոսութեան զրջանում գործածուած գրեր էին»⁸⁵:

Մանկավարժ Արգար Մովսիսեանն ընդունում է, որ «հայերն ունեցել են նախամեսրոպեան գրականութիւն, մանաւանդ մեկենական գրականութիւն, սակայն անյայտ է մնում, թէ ինչ տառերով է ստեղծուած այդ գրականութիւնը»: Բայց մի քան պարզ է ու անառարկելի, որ հայերը նախեան մեսրոպեան գրերը, դարեր շարունակ, տարբեր ժամանակներում օգտագործել են սեպագրեր, յունական, ասորական, արամեան ու դանիէլեան տառերը, մեզ յայտնի քաղմաքիւ տեսակի նշանագրեր և ինչպէս Խորենացին է ասում՝ «վաղլեզուց գտեալ» գրերը⁸⁶:

Հնագէտ Լաւրենտի Բարսեղեանը գտնում է, որ «Հայաստանում հիերոգլիֆն ապրել է զարգացման երկու ժամանակաշրջան: Առաջին ժամանակաշրջանի նմոյշներին մենք հանդիպում ենք ուրարտական նիեթական կուլտուրայի մնացորդների վրայ, իսկ երկրորդ ժամանակաշրջանը, որտեղ անկասկած պահպանուել են ուրարտական, գուցէ եւ ինեթական հիերոգլիֆ գրի տրադիցիաները, համապատասխանում է արդէն մ.թ. ԺԴ-ԺԷ. դդ.»: Քննելով նախառարտական վանկա-Հնչիւնային ոչսեպագրիր նմոյշները, նա Ցոլակերտի արձանագրութիւնը թուագրում է մ.թ.ա. ԹՌ - Լ դարերով, իսկ Արմաւիրինը՝ մ.թ.ա. Բ հազ. վերջով՝⁸⁷:

Մեծ Հայքի Գուգարք նահանգի Թռեղք (յետագյում՝ Ծաղկայ) գաւառու Օձնի՝ ներկայիս Օզնի (Հինիա) հայաբնակ գիւղի մօտ (Փարվանա լճից 20 կմ հիւսիս, Ծալկայից 30 կմ արեւմուտք) հնա-

⁸⁵ ՄԿՐԵԱՆ Մ. Մ., Հայ հիմ գրականութեան պատմութիւն (Ե-Ժ դդ.), Երեւան, 1976, էջ 72, 74, 75, 106:

⁸⁶ ՄՈՎՍԻՍԻԱՆ Ա. Խ., Հայագիր դպրոցի հիմնադիրն ու առաջին ուսուցիչը. ՄՄՀՃ, 1963, էջ 224, նաեւ՝ 214-215, 217:

⁸⁷ ԲԱՐՄԵՂԵԱՆ Լ. Ա., Հայոց գիրը ..., էջ 48, 50-51:

Դէտ Բորիս Կուֆտինի պեղումներով 1947թ. յայտնաբերուած խեցանօթի վրայ կան հնագոյն գրի փայլուն նմոլչներ⁸⁸ (նկ. 21):



Նկար 21

Պատմաբան, հնագէտ Բարկէն Առաքելեանն ընդունում է նախամեսրոպեան գիրգրականութեան եւ դպրութեան գոյութիւնը՝ «Մեհեանները եւ քրմական դասը իրենց ձեռքում էին կենտրոնացրել գիրը, գրականութիւնը, դպրոցն ու կրթութիւնը, բարձրացիական ակտերի (ծնունդ, ամուսնութիւն, ընտանիք եւ ընտանեկան յարաբերութիւններ) կարգաւորումն՝ ու տօրինումը, օրէնքների սահմանումը, դատական իրաւասութիւնը, գուշակութիւնն ու աստուածների առջեւ բարեխօսութիւնը, անգամ բժշկութիւնը, մի խօսքով, ողջ հոգեւոր կեանքը»⁸⁹:

Հնագէտ Գէորգ Տիրացեանը չի բացառում, որ «հին Հայաստանում գոյութիւն ունեցած լինեն ինքնուրոյն նշանագրեր, որոնք գործ են ածուել հայկական մեհեաններում, եւ այդ նշանագրերի, ինչպէս նաև, հանաբար, արամէկական եւ յունական տառանիշերի օգնութեամբ գրուող հայալեզու գրականութիւն՝ նոյն մեհեանների շրջանակներում»⁹⁰:

Զեռագրագէտ Ասատուր Մնացականեանը կարեւորում է Կարապետ Սասնեցու վկայութիւնները, տառերը ստեղծելու ամիսներին Մաշտոցի՝ Բալուում (Մեծ Հայքի Չորրորդ Հայք աշխարհի Բալահովիտ գաւառ) գտնուելու վերաբերեալ: Նա շրջել է Արածանի գետի ափերով, դէպի ակունքները, անցել քարայրից քարայր: Հասնե-

⁸⁸ КУФТИН Б. А., Археологические раскопки 1947 года в Цалкинском районе, Тбилиси, 1948, тե՛ս Նաեւ ՌԱՆՌԱՌ-ՎԻԼԻ Հ. Է., Знаки и символы на глиняной посуде куро-аракской культуры (К интерпретации знаков на миске из Озни).- Сообщения АН Груз. ССР, 133, թիւ 1, 1989, էջ 211:

⁸⁹ ԱՌԱՔԵԼԵԱՆ Բ. Ն., Քրմերի գիրը հասարակական կեանքում.- Հայ ժողովի պատմութիւն, հու. 1, Երեւան, 1971, էջ 906:

⁹⁰ ՏԵՐԱԾԵԱՆ Գ. Ա., Հայաստանում գործածուող գրերը նախամեսրոպեան շըրջանում.- Հայ ժողովրդի պատմութիւն, հու. 1, Երեւան, 1971, էջ 907:

լով Բալուի բերդը՝ հանգրուանում է այրերից մէկում ու ճգնում եօթ շաբաթ, որից յետոյ, տիրոջ աջը «նրա սրտի սալին» գրում է 14 մատնագիծ տառ: Քարը կայ մինչեւ ցայտօր⁹¹: Քաղաքում կայ մի քարաժայու, որը տեղացիներն անուանում էին Սուրբ Մեսրոպի լեռ⁹²:

Հնագէտ, ժայռապատկերաբան Յարութիւն Մարտիրոսեանը, քննելով նախնադարեան, ուրարտա-հայկական եւ միջնադարեան նշանագրերը, եզրակացնում է, որ «Հայաստանի նախնադարեան գաղափարաբանութեան կամ կրօնի ու արուեստի բարձր զարգացման հիման վրայ մ.թ.ա. Գ. հազ. ձեւաւրուել էին արդէն գրչութեան ամենապարզ տեսակները, պատկերագիրը, նշանագիրն ու գաղափարագիրը: Ցետագայում արդէն, կիրառուելով սեպագրի հետ միաժամանակ՝ «գաղափարագրութիւնը չի բաւարարում զարգացող երիտասարդ պետականութեան եւ համապատասխան գաղափարաբանութեան պահանջները: Այդ պատճառով հեթանուական Հայաստանում լայնօրէն օգտագործում են օտարազգի հնչիւնային գրեր: ...Գաղափարագրութիւնը շարունակում է յարատեւել մասնաւրապէս մեհենաններում՝ իրեւ կրօնական-հմայական գրչութեան ձեւ»:

Նա ապացուցում է, որ ժայռագրերը, ուրարտական շրջանի մեշտնագրերն ու միջնադարեան նշանագրերը հայաստանեան պատկերագրութեան ժառանգական զարգացման տարբեր փուլերն են՝ «նախնադարում ծագած նշանագիր գաղափարագրութիւնն, այսպիսով, անցնում է չորսհազարամեայ պատմութիւն»⁹³:

Արեւելագէտ Գագիկ Սարգսեանն ընդունում է օտարալեզու հայ գրականութեան գոյութիւնը, իսկ Դանիէլեան գիրը համարում օտարածին՝ «Հայ հասարակութիւնը մինչ այդ ել զուրկ չէր գրեթից: Դեռեւս եօր-ութ հարիւրամեակ առաջ նա սկսել էր օգտագործել արամերէն եւ յունարէն լեզուները՝ իրենց դպրութիւնների հետ միասին, իսկ Գ - Դ. դարերում սրանց էին աւելացել ասորերէնն ու պարսկերէնը, որոնցով էլ տարւում էին գործերը եւ արտում վճիռները արքունի դիւաններում: Բացի այդ, ըստ աւանդութեան, գոյութիւն են ունեցել նշանագրեր նաև հայոց լեզուի

⁹¹ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ Ա.Ս., Յշ. աշխ., էջ 163.

⁹² ՑԱԿՈԲԵԱՆ Թ. Խ., ՄԵԼԻՔ-ԲԱԽՆՇԵՍԱՆ Սո. Տ., ԲԱՐՍԵՂԵԱՆ Թ. Խ., Հայաստամի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետ՝ ՀՀԵՏԲ), Հայ. Ա, Երեւան, 1986, էջ 561:

⁹³ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Յ. Ա., Հայաստանի նախնադարեան նշանագրերը եւ նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Երեւան, 1973, էջ 69:

համար, այսպէս կոչուած «Դանիելեան նշանագրերը», որոնք, սակայն, ընդօրինակուած լինելով օտար այրութենաներից, չէին բաւրարում հնիշւններով հարուստ հայոց լեզուի պահանջներին, ուստի, ինչպէս եւ մի շարք այլ պատճառներով, տարածում չգտան, մնալով սույն քրութեան նեղ շրջանակի յատուկ գրառումների միջոց»⁹⁴:

Բանասէր Ռաֆայէլ Իշխանեանը գտնում է, որ «այս հարցն առայժմ մնում է քաց (քէև անձնական կարծիքն է, որ, պիտուամենայնիւ, նախամաշտոցեան շրջանում ինչ-որ ժամանակ հայերէն գրել ենք)»⁹⁵:

Արեւելագէտ, գրաբան Արտակ Մովսիսեանը մէհենագրերի ուսումնասիրութեամբ եղրակացնում է, որ «քիայնա-ուրարտական մենագրութեան լեզուի ամենահաւանական թեկնածուն հայերէնն է», եւ որ հայերէնը գրաւոր լեզու էր «Մաշտոցի հանճարեղ գիւտից տասնչորս դար առաջ»: Ժայռապատկերները եւս համարելով գրի մինչայրենական փուլ, նա իրաւացիօրէն պնդում է՝ «Այսպիսով, ստեղծուելով մ.թ.ա. Ե - Դ. հազ. եւ տարրեր դրսեւորումներով կիրառուելով մինչեւ այսօր, հայաստանեան պատկերագրութիւնը՝ հայկական մեհենագրութիւնը, ներկայանում է իրեւ աշխարհի ամենաերկարակեաց նշանագրային համակարգը»⁹⁶:

Ապարանի ջրամբարի ափին մօտ 50 քարասալ կայ՝ գծային գրերով, որ առայժմ ուսումնա-սիրուած չեն⁹⁷: (Ջրերի մակարդակի բարձրացման հետեւանքով 1986 թ. դրանք ջրասոյզ են եղել) (նկ. 22):


...

94 ՍԱՐԳՍԵԱՆ Գ. Խ., Հայ ժողովրդի պատմութիւն, Երեւան, 1972, էջ 160:

95 ԻՇԽԱՆԵԱՆ Ռ. Ա., Ժայռապատկերները պատմում են.- Գիտութիւն եւ տեխնիկա, թիւ 5, 1987, էջ 22:

96 ՄՈՎՍԻՍԵԱՆ Ա. Ե., Վանի թագաւորութեան (Քիայնիի, Ուրարտու, Արատ) մեհենագրութիւնը, Երեւան, 1998, էջ 51, 57:

97 ՄՈՒՐԱԴԵԱՆ Ֆ. Մ. Նորայրաց նշանագրեր Ապարանի շրջանից.- Հնագիտական աշխատանիքները Հայաստանի նորակառուցմերում (1986-1987 թթ. պիտուամական արդիւնքները), Երեւան, 1992, էջ 103-105, աղ. CIII-CXV, տե՛ս նաև ՄՈՎՍԻՍԵԱՆ Ա., Հայաստանի գծային գիրը (Թ. Գ-Ա. հազ.).- Մերձաւոր եւ Միջնական կերպութեան արդիւնքները, XVIII, Երեւան, 1999, էջ 203-204:



Նկար 22

1999 թ. դրանցից ոչ հեռու, ժայռագրերի մի նոր խումբ է յայտնաբերել է Փիղիկոս Համլետ Մարտիրոսեանը՝ մօտ 10 կիսա-ջրասոյզ քար՝ գծային գրերով:

Լեզուաբան, բասկագիտ Վահան Սարգսեանը եւս գտնում է, որ Մաշտոցն օգտագործել է հնում առկայ գրային համակարգի նը-շանները՝ թէ՛ մեհենագրերը, թէ՛ տառերը⁹⁸:

Լեզուաբան Գեօրգ Զահուկեանը ուրարտական արձանագրութիւնների ներածական բանաձեւերի վերլուծութեամբ յանդել է եղ-րակացութեան, որ այդ բանաձեւերը հայկական են, դրանց բառապաշարը հիմնականում հայկական է, քերականական առանձնայատկութիւններն էլ հնարաւոր է բացատրել նախագրաբարեան շրջանի քերականական առանձնայատկութիւններով, որ դրանցով կարելի է նախագրաբարեան շրջանի բառային վերականգնումներ անել եւ այլն⁹⁹:

Ամերիկաբնակ մատենագիտ Լեւոն Խաչիքեանը չափազանց խստորէն (երբեմն էլ անհիմն) քննադատում է նախամաշտոցեան գրի գոյութիւնն ընդունող գիտնականներին: Նա բացառում է ժայռապատկերների խորհրդանիշերի որեւէ աղերս գրի ու լեզուապատկանելութեան հետ, քանի դրանք ո՛չ «պարզունակ գրառումներ են ո՛չ էլ պատկերագիր վաւերագրութիւն»¹⁰⁰:

⁹⁸ ՍԱՐԳՍԵԱՆ Վ., Հայոց գրերի ծագումը, Երևան, 1999:

⁹⁹ ԶԱՀՈՒԿԵԱՆ Գ. Բ., Ուրարտական արձանագրութիւնների Անրածական բանաձեւերի հնարաւոր հայկական բնոյրի մասին. Պատմա-բանասիրական հանդէս, 2000, թիւ 1, էջ 127:

¹⁰⁰ ԽԱՉԻՔԵԱՆ Լ. Գ., Հայ դպրութեան պատմութիւնը՝ Քմբական տեսութեամբ, 3 հատորով, հոդ. 1, Անթիւհաս-Լիբանան, 2000, էջ 167-170:

Վիմագրագիւղ Գրիգոր Գրիգորեանը գտնում է, որ «հնագոյն վիմագրական տեքստեր կարելի է համարել ժայռապատկերները, որոնք կերտուած են ... մ.թ.ա. է - Ա հազ. ընթացքում»¹⁰¹:

Հր. Աճառեանից տասնամեակներ անց նախամաշտոցեան գրի խնդրում մի շարք տրամաբանական հարցադրումներ ձեւակերպեց Ռաֆայէլ Խշանեանը՝ «Նախ, եղել է արդեօ՞ք նախամաշտոցեան հայերէն գիր, աւելի սոյզ՝ նախքան Մաշտոցը որեւէ տեսակ տառերով հայերէն գրու՞լ է, թէ ոչ: Հայաստանի (պատմական) տարածքում գտնուած եւ նախքան Մաշտոցը գրուած բազմաթիւ արձանագրութիւններից որեւէ մէկը մինչեւ այժմ հայերէն չի ընթերցուել: Միայն մի քանի արձանագրութիւն՝ փորագրուած ծանօթ տառերով, դեռեւս որեւէ լեզուով չեն վերծանուել: Հնարաւո՞ր է, որ դրանք հայերէն լինեն: Զի բացառում: Հնարաւո՞ր է, որ որեւէ լեզուով (ոչ հայերէն) ընթերցուած որոշ արձանագրութիւններ, յետագայում պարզուի, որ հայերէն են գրուած: Նոյնպէս չի բացառում: Վերջապէս, հնարաւո՞ր է, որ գտնուեն նախամաշտոցեան նոր արձանագրութիւններ, որոնք ստուգապէս ընթերցուեն հայերէն: Դարձեալ չի բացառում»¹⁰²:

Այս հիմնահարցի շուրջ 60-ականների մկրեից ծաւալուած բանավէճին, մինչ այդ, բնականոն զարգացում էր հաղորդուել 1963 թ., պատմաբան, աղբիւրագիւտ Լեւոն Խաչիկեանի մի դիտողութեամբ՝ «Անառեանը, Արենեանը, Մանանեանը, Մալխասեանը եւ այլք, ասելով, թէ Մաշտոցից առաջ հայ գրականութիւն չի եղել, դրանով բնաւ էլ չեն ժխտում պատկերագրերի կամ գաղափարագրերի գոյութիւնը Հայաստանում. այդ հարցը նրանց չի էլ հետաքըրք-րել»¹⁰³:

Եւ, մի քանի տարի չանցած, Հայաստանում յայտնաբերուեցին հազարաւոր ժայռապատկերներ, որոնց թւում հարիւրաւոր փորագիւր պատկերանշաններ (նկ. 24-26): Տարիներ անց Յ. Մարտիրոսեանը կարեւորեց տեղական ժայռագիւր գաղափարագրերի նշանա-

¹⁰¹ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԳՐ., Հայկական վիմագրութիւն, Երեւան, 2000, էջ 9.

¹⁰² ԻՇԽԱՆԵԱՆ Ռ. Ա., նշ. աշխ., էջ 22:

¹⁰³ ԽԱԶԻԿԵԱՆ Լ. Ս. Նախամեարոպիան գրի հարցը եւ հմայագրեց. - Պատմաբանասիրական հանդէս, 1963, թիւ 4, էջ 146, Առյօն, Օտարապեղու հայ գրականութիւնը չորրորդ դարում (Ներսէս Պարբեսի եւ Նպիլիանի Առրայայու «Հարցման» առթիւ). - Պատմաբանասիրական հանդէս, 1973, թիւ 3, էջ 27-51:


կութիւնը հայ գրաբանութեան ինդիրներում, նշելով, որ «ամեն մի նախասկզբնական գիր և գրչութիւն ծայր է առնում իրերի, առարկաների, կենդանիների, մարդկանց, լուսատուների պատկերներից, որոնցով կազմում էին ժայռանկարների երթեմն շատ շքեղ ու խօսուն կոմպոզիցիաները»¹⁰⁴:



Նկար 24



Նկար 25




Նկար 26

Համարւում է, որ որոշ ժողովուրդների այբուբեններ կարող են ծագած լինել տեղական գաղափարագիր-պատկերագրերից, քանզի պատկերագրութիւնը պատմականօրէն նախորդում է միւս գրասենակներին։ Ծագելով նկարչութիւնից (կամ հակառակը, գուցէ եւ՝ միասին), պատկերագրութիւնն ապրել է ինքնուրոյն զարդընթաց, որի արդիւնքում պատկերագրութեան հին ու կայուն աւանդոյթներ ունեցող օջախներում (Եղիպտոս, Հայաստան, Ջինաստան) էլ հէնց առաւել զարդացաւ գաղափարագրութիւնը։

Պատկերագրից - տառ զարդացումները տառերի տեսքի առումով համընդունելի են, իսկ հնչիւնական կամ իմաստային առումով՝ դեռ ոչ քանզի քիչ են վատահութեան արժանի աշխատութիւնները, իսկ եղած վարկածների մեծ մասի հիմքում սուբյեկտիվ-կամայական մօտեցումներ են, մասնակի ապացոյցներ ու պատահական համընկնումներ։

Հայոց այբբենական գրի դէպքում չափազանց մեծ է դայթակ-դութիւնը՝ մեսրոպեան այբուբենը միարժէքօրէն ժայռապատկերներից բխած համարելը, քանզի դրանցում առկայ են բազմաթիւ տառա-նման նշաններ (նկ. 27-32):

¹⁰⁴ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Յ. Ա., Գիտութիւնն սկսում է նախնադարում, Երեւան, 1978, էջ 79:




Նկար 27



Ակադ 28



Ակադ 29



Ակադ 30



Ակադ 31



Ակադ 32

Զանդրադառնալով ենթակայական պատճառներին, նշեմ միայն առարկայական (լր կարծիքով) մի շարք իրողութիւններ՝

ա) լեռնաշխարհն արտափ հարուստ է բազմատեսակ ու բարձրագույն բիւրաւոր ժայռապատկերներով։ Հայաստանի Հանրապետությունում դրանց կուտակումները գտննում են հետեւեալ վայրերում։

Արարատի մարզում՝ Խոսրովի անտառ¹⁰⁵, Արմաւիրի մարզում՝ Արարատի մարզամօղ, Արագածոտնի մարզում՝ Արագած Լեռ¹⁰⁶, Մաս-Ալմաւիր, Մեծամօղ, Արագածոտնի մարզում՝ Արագած Աղբյուր¹⁰⁷, Կաբաւաձոր, Շամշիրամ, Ոսկեհաս¹⁰⁸, Ագարակ¹⁰⁹, Քու-

¹⁰⁵ ԿԱՐՄԻՆԵՍԻՆ Գր. Յ., Ժայռապատկեր.-Հայկական սովորական հանրագիւտարան, Համ. 8, Երևան, 1982, էջ 169: Այս տարածքում ժայռապատկերների մատարան, Համ. 8, Երևան, 1982, էջ 169: Այս տարածքում ժայռապատկերների մատարան, Համ. 8, Երևան, 1982, էջ 169:

¹⁰⁶ ՂԱՓԱՆՑԵԱՆ ԳՐ., Խ. աշխ., էջ 95, ԱՇԽ. ՄԱԼԱՆԹԱՐ, Խ. աշխ., էջ 73-77, նկ. 22, 23, ՏԵՐԱՊՈՎԱԿՍԵԱՆ Մ., Խ. աշխ., էջ 65-66, ԲԱՐՄԵՂԵԱՆ Լ. Ա., Նոր թիւթիւն էջ 147-159:

¹⁰⁷ ԹԱՐՅՈՒՆԻԱՆ Ա. Պ., ՀՀ աշխարհագույն պատմության մասին, 52 43:

108 Առկենաւորի ժայռապատկերները Լուսակատար էերան արեւելահայեաց լանջին են:
1991 թ. աշնանը օշականցի Փիզիկայի ուսուցիչ Դաւիթ Խումարեանը ցոյց
տուեց դրանց տեղը, հինգ պատկեր: Յետագայում, 1997-2002 թթ., ութ դիտարշա-
ւուեց դրանց լուսական պատկերները: Հայտնաբերել ու լուսանկարել մօտ
ւի ընթացքում ինձ յաջողուեց յայտնաբերել: Քարտիզապերել ու լուսանկարել մօտ
ւի ընթացքում ինձ յաջողուեց յայտնաբերել: Քարտիզապերել: Ժայռապատկեր-
130 ժայռապատկեր, Ազարակ եւ Աղաւնատուն գիշերի միջեւ: Ժայռապատկեր-
ների հարեւանութեամբ կան վաղբրոնդէպարեան բնակատեղիի աւերակներ եւ
ների հարեւանութեամբ կան վաղբրոնդէպարեան համալիրն է:
դամբարանադաշտ: Երկու կմ հետևի Ազարակի պաշտամունքային համալիրն է:
Նորայայու այս ժայռապատկերախումբն ինչո՞ր հրաշքով հազարաւոր տարիներ

չակ¹¹⁰, Գեղամաւան¹¹¹, Շիրակի մարզում՝ Զիթհանքով¹¹², Անիստմա-
զավ¹¹³, Լոռու մարզում՝ Նեղոց¹¹⁴, Կոտէս¹¹⁵, Լոռիբերդ¹¹⁶, Տաւուշի
մարզում՝ Գօշ¹¹⁷, Կոտայքի մարզում՝ Զովունի¹¹⁸, Պտղնի¹¹⁹, Բա-
լահովիտ¹²⁰, Բջնի¹²¹, Գեղարդ¹²², Գեղամայ-լեռներ¹²³, Գեղարքու-

պահպանուել է բազում արշաւանքների խաչմերուկ այս՝ համեմատաբար ցածրա-
դիր հարթավայրում:

¹⁰⁹ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ Մ. Փ., Ագարակի ժայռափորագրութիւնները.- Լրաբեր ՀՊ.
1990, թիւ 1, էջ 70-77: 2001 թուականից պեղում է ԳԱԱ Հնագիտութեան եւ
ազգագրութեան ինստիտուտի՝ Պատկ Աւետիսիանի ղեկավարած արշաւախումբը:

¹¹⁰ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Յ. Ա., Հայաստանի նախադարձական մշակոյթի նոր յուշար-
ձաններ.- Պատմաբանասիրական հանդէս, 1969, թիւ 3, էջ 192:

¹¹¹ Նորայաստ գունանկար անճաւային պատկերներ են, 20-25 հատ, գտնվում են Քա-
սախ գետի կիրճում, Սաղմոսավանքի դիմաց: 2002 թուականից պեղում է հայֆրան-
սիական արշաւախումբը:

¹¹² ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆ Մ. Գ., նշ. աշխ., էջ 45-47, ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Յ. Ա., նշ. աշխ.,
էջ 192:

¹¹³ Հաղորդեց անճաւագէտ Արմէն Գէորգեանը, 2001 թ.:

¹¹⁴ Հնագէտ Վարշամ Աւետեանը 2002 թ. մարտի 4-ին ինձ հաղորդեց, որ Նեղոց
գիւղից ոչ 4եռու նկատել է 15-20 ժայռապատկեր: Գիւղը Դեբեդ գետի աջ ա-
փին է, Ախմթալա երկաթուղային կայսրանից 1,5 կմ արեւմուտք: Տե՛ս նաեւ
ՀՀՇՏԲ, Հա. 3, Երեւան, 1991, էջ 975:

¹¹⁵ ՏՕՆԱԿԱՆՆԵԱՆ Յ. Հրայրի, ԹՈՂԻՆԱԹԵՍԱՆ Կ, Կը խօսե՞ն արդիօք քարերը-
Չուարթնոց, 1991, թիւ 4, էջ 31-34:

¹¹⁶ Գիտաժողովում գեկուցման ժամանակ տեղեկացրեց Հնագէտ Սեդա Դեւեցեանը,
2001 թ.:

¹¹⁷ Վանքից մօտ մէկ կմ հարաւ-արեւմուտք, դաշտերում, կա 6-7 ժայռապատկեր:
Նկատել է Հնագէտ Վարշամ Աւետեանը, 2002 թ.:

¹¹⁸ Կարմիր բերդի տարածքում են, Երեւանից հիւսիս: Տեղը ցոյց է տուել է Հնա-
գէտ Բորիս Գասպարեանը, 1992 թ.:

¹¹⁹ Զ դարում կառուցուած Պտղնավանքի հարաւահյեաց պատին մի քանի արե-
ւանշան կայ: Նկատել է ճարտարապետ Սուրեն Պետրոսեանը, Սրանք հին, «Պա-
տմական» ժայռապատկերներ չեն, սակայն վկայութիւն են վաղ միջնադարում ժայ-
ռապատկերման աւանդութիւնների յարատեւման:

¹²⁰ ԳՐԻԳՈՐԵԱՆ Ա.Ծ., Օճապատկեր տապանաքարեր.- Մշակոյթ, 2.3.1990, էջ 99:

¹²¹ Եղիշերուի փորագրութիւն է, Գրիգոր Մագիստրոսի պատուէրով 1031 թ. կա-
ռուցուած Ս. Աստուծածին եկեղեցու մուտքի աջ պատին: Սա նոյնական միջնա-
դարեան ժայռապատկերման աւանդութիւնների վկայութիւն է:

¹²² Գեղարդավանքի կամարակապ մուտքի ձախ կողմում, խոշորաչափ սրբառուշ քա-
րաբեկորի արեւելահյեաց նիստին մարդանման գծապատկեր է: Փորագրութիւն-
ները նկատել է երկրաբան Յ. Տօնականանը, 1991 թ.:

Նիքի մարզում՝ Լճաշէն¹²⁴, Գեղամայ լեռների լճաշայեաց լանջեր¹²⁵, Վարդենիսի լեռներ¹²⁶, Վարդենիկ¹²⁷, Սեւար¹²⁸, Վարդենիսի լեռնացք¹²⁹, Ալրբ եւ Ներքին Շորժա (Քեթի)¹³⁰, Սիւնիքի մարզում՝

- 123 ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Յ. Ա., նշ. աշխ., էջ 194-200, նոյնը, ժայռապատճենների դասկարգման մի քանի նախնական տուեալներ.- Լրաբեր ՀՊ. 1970. թիվ 9, էջ 54-70, ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Յ. Ա., ԽՄԲԱՅԵԼԵԱՆ Յ. Ռ., Գեղամայ լեռների ժայռապատճենները, Երեւան, 1971. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Յ. Ա., Գեղամայ լեռների ժայռապատճենները, Երեւան, 1981:

124 Հանրայայտ հնավայրի կենտրոնական մասում կան 6 եւ 2 փոսիկանոց անցքաչափեր: Նևատել է հնագէտ Վարշամ Աւետեանը, այդ մասին նաև տեղեկացրեց ինձ 2002 թ. մարտի 4-ին:

125 Զարդար, Փոքր Սպիտակասար եւ Արխաշան լեռների միջեւ 1997 թ. յայտնաբերել ենք մի քանի ժայռապատճեն:

126 «Վարդենիսի ժայռապատճեններ» արտայայտութեան առթիւ. միմեանց գրեթէ շարունակութիւն կազմող Գեղամայ եւ Վարդենիսի լեռնաշղթաներում 1963 - 83 թթ. ճարտարապետ Ս. Պետրոսեանը յայտնաբերել եւ արտանկարել է Հազարաւոր ժայռապատճեն, չնչելով, սակայն, իրաքանչիւր յուշարձանի տեղը, գոնչ՝ ըստ լեռնաշղթայի: Պատկերների մեծագոյն մասն առաջօր հրատարակւած չէ: Այն, որ նրա յայտնաբերածներից մօտ 1000-ը Գեղամայ լեռներում են, վկայուած է 1986 - 2002 թթ. իմ գիտարշաների ընթացքում իրականացրած հաշուառմամբ եւ արուած աւելի քան 2000 ժայռապատճենի լրացնակարով: Ուստի, մինչեւ Վարդենիսի լեռներում իրականացուելիք մանրագնին որոնումները, գժուար է որոշակիութեամբ նշել Վարդենիսի լեռների ժայռապատճենների քանակը: Նշեմ, այնուամենայնիւ, որ ըստ Ս. Պետրոսեանի, իր յայտնաբերածների մօտ մէկ երրորդը Վարդենիսի լեռներից են:

127 Մի քանի ժարուապատճեն կայ Վարդենիսի գիւղի մօտի «Աւերակներ» բրոնզէդարեան բնակատեղիի մօտ (ԲԱՐԴՈՒԴԱՐԵԱՆ Ս. Գ. նշ. աշխ., էջ 43-44. Գ. Հ. Ռեան, Սեւանի աւազանի կիկլոպիան ամբողները, Երեւան, 1968, էջ 40):

128 Աստղագիտական կենտրոնի մնացորդներ են, կայ 14 ժայռապատճեն: Յայտնաբերել է Ս. Պետրոսեանը, 1965 թ., Գեղարքունիքի մարզի Գեղհովիս գիւղից 8 կմ հարաւ, 2650 մ բարձրութեամբ: Առաւել աչքի ընկնող պատճենները յետագայում հրատարակուել են Յ. Ա. Մարտիրոսեանի՝ ժայռապատճենների վերաբերեալ բոլոր գրեթերում: Աշխարհահռչակ այս յուշարձանին անդրադարձել է նաև հայ աստղագիտութեան պատմաբան Թեմիկ Թումանեանը, 1997 թուականից՝ նաեւ տողերիս հեղինակը:

129 Խոշոր չափի գետնատարած հարթ քարասալեր են, 17 հատ, հարիւրաւոր տարած չափ օգակածեւ փորագրութիւններով ու գեերով: Յայտնաբերել է Ս. Պետրոսեանը, 1966 թ., Վարդենիսի լեռնանցքի (Սուլեմ / Սելիմ) բարձրագոյն մասում, Մարտունի - Եղէջնաձոր ճանապարհի հալեւանութեամբ, 2400 մ բարձրութեամբ:

Ուխտասար, Զերմաջուր, Կարկառ, Մուրադ սար¹³¹, Զօրացքար¹³², Քարաշէն¹³³, Նաւասար¹³⁴, Քարվաճառի շրջանում՝ Սեւ լիճ, Զալի լիճ, Եռակատար¹³⁵, Ալ լճի շրջակայք, Իշխանասար¹³⁶ եւ այլն:

Արցախի Հանրապետութիւնում ժայռապատկերներ կան Շուշի քաղաքի մօտ¹³⁷:

Զաւախքում ժայռապատկերներն Ախալքալաքի մօտ են:

Հայաստանի շրջակայքում ժայռապատկերներ կան Վըաստանի հիւսիսում՝ Մգվիմեւի հնավայրում¹³⁸:

Դրանց՝ աստղագիտական քարտէզ ծառայած լինելը նշել է Բ. Թումանեանը: 1995 թ. մշակել եմ դրանց թուագրման աստղագիտական մեթոդ, որը 300 տարուայ ճշտութեամբ ցուցանում է յուշարձանի տարիքը՝ մ.թ.ա. 26-դար:

¹³⁰ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Յ. Ա., նշ. աշխ., էջ 194, ՀՀՇՏԲ, հո. 2, Երեւան, 1988, էջ 34, հո. 4, Երեւան, 1998, էջ 151:

¹³¹ ԿԱՐԱԽԵԱՆԵԱՆ ԳՐ. Յ. ՍԱՖԵԱՆ Պ. Գ., Հայաստանի հնագոյն պատմութեան նորայայտ յուշարձաններ.- Սովետական արուուեստ, 1967, թիւ 1, էջ 31-38, ԿԱՐԱԽԵԱՆԵԱՆ ԳՐ. Յ. ՍԱՖԵԱՆ Պ. Գ., Հայաստանի հնագոյն պատմութեան նորայայտ յուշարձաններ.- Պատմա-բանասիրական հանդէս, 1969, թիւ 1, էջ 275-83, ԿԱՐԱԽԵԱՆԵԱՆ ԳՐ. Յ. Ս. ՍԱՖԵԱՆ Պ. Գ., Սիւմիքի ժայռապատկերներն. թը, Երեւան, 1970:

¹³² Սիսիանից 3 կմ հիւսիս գտնուող եղակի այս յուշարձանախմբի (հնագոյն աստղագիտարան, ուսումնական կենտրոն) տարածքում, ուղղաձիգ կանգնեցուած կենտրոնական քարաբեկորներից մէկի հիմքում 2000 թ., արեւելագէտ Արտակ Սարգսեանը հետ նկատել ենք շրջանաձև դասաւորուած փոսիկախումբ: Կայ այժ յիշեցնող հողմնահարուած մի ժայռապատկեր՝ 300 մ հարաւ, «Քարհանք» ձորում:

¹³³ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Յ. Ա., նշ. աշխ., էջ 194, ՀՀՇՏԲ, հո. 2, էջ 34:

¹³⁴ ԱՅՎԱԶՅԱՆ Ա. Ա. Նաւասարի ժայռապատկերները.- Լրաբեր ՀՊ, 1981, թիւ 2, էջ 45-53, Այնը, Նախիջեւանի կորողային յուշարձաններն ու պատկերաբանականները, Երեւան, 1987:

¹³⁵ Քելքաջար.- Ադրբեջանական սովետական հանրագիտարան, հո. V, Բաքու, 1981, էջ 334, ՄԻՄՈՆԵԱՆ Յ., Քարվանադի (Քելքաջար) շրջանի յուշարձանների քարտեզը, Երեւան, 1996, ԿԱՐԱՊԵՏԵԱՆ Ս. Գ. Հայ մշակոյթի յուշարձանները Խոր Հրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում, Երեւան, 1999, էջ 14, 75-76:

¹³⁶ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Յ. Ա., նշ. աշխ., էջ 194:

¹³⁷ Հնակենդանաբան Սոնա Մեծլումեանը 1990 թ. ինձ տեղեկացրել էր, որ քաղաքի շրջակայ անտառներում տեսել է մի քանի այժմապատկեր ի դէպ, այդտեղ կան շատ անձաներ:

¹³⁸ Կովկասեան լեռների հարաւային լանջերին է, Ռիոն գետի վերին հոսանքում, Զիաթիր քաղաքից 35 կմ հիւսիս, տե՛ս ՅԱՄՅԱԴԻՆ Ը. Հ., Պալեոլիտические на-

Աբխազիայում ժայռանկարներ կան Գուարապ հնավայրում - Աղցա անձաւում¹³⁹:

Դաղստանում շատ ժայռապատկերներ կան՝ Կապչուգայ, Բուլիս-կոկ եւ մօտ 20 այլ հնավայրերում¹⁴⁰:

Աղրբեշանի ներկայ տարածքում նշանաւոր Քորստանն է (Կաբըրիստան)¹⁴¹, բաղկացած Գրման լեռ, Զինդիր լեռ, Մեծասար եւ Փոքրասար հնավայրերից: Փորագիր պատկերներ կան նաև Ավշերոն թերակղզում¹⁴²:

Մեծ Հայքում եւս, որքանով որ ուսումնասիրուած է, կան շատ հնավայրեր. Երգնկայի մօտ, Կարին¹⁴³, Կաղզվան¹⁴⁴, Ցոլակերտ, Վանի

весы Мгвимеви, близ Чиатуры.- Советская Археология, III, 1937, № 57, **ФОРМОЗОВ А. А.**, Очерки по первобытному искусству, Москва, 1969, № 26:

¹³⁹ Անձաւը Նոր Աֆոնից 5 կմ հիւսիս է. Փափրցիս գետի մօտ, տե՛ս **СОЛОВЬЕВ Л. Н.**, Надписи и изображения грота Агта у селен я Аниухва Абхазская.- МИА, թիւ 79, 1960, **ФОРМОЗОВ А. А.**, նշ. աշխ., № 26:

¹⁴⁰ **МАРКОВИН В. И.**, Наскальные изображения в предгорьях Северо-Восточного Дагестана.-Советская Археология, 1958, թիւ 1.147-62, **ФОРМОЗОВ А. А.**, նշ. աշխ., № 26:

¹⁴¹ Հիմնականում քարահան ժայռապատեր են, հաշուըրուած է մօտ 750 հատ՝ մինչեւ 3000 պատկերով: Հնավայրը գոյնում է Բաքուից 60 կմ հարաւ, յայտնաբերուել է 1939 թ., 1966 թուականից պետական արգելոց է դարձել, գործում է մի քանի գիտաշխատող ունեցող գիտական խումբ: Տե՛ս **ДЖАФАРЗАДЭ И. М.**, Наскальные изображения Кобыстана в Азербайджанской ССР.- Труды Музея истории, Баку, 1957, **ФОРМОЗОВ А. А.**, նշ. աշխ., № 26-47:

¹⁴² Քարահան պատկերներ են սալվաքարերի վրայ, բաւական վնասուած: Յայտնաբերուել են 1963 թ., Տե՛ս **ФОРМОЗОВ А. А.**, նշ. աշխ., № 26, 48:

¹⁴³ 15 մ երկարութեամբ «Ջունի» անձաւում կայ 50 նշանագիր եւ պատկեր: Յայտնաբերել է ասուրագէտ Հերման Վարիմ, 1965 թ. (**VARY H.**, Alttürkische Felszeichnungen in Nordostanatolien.- Ural-Altaische Jahrbücher, Bd. 40, Heft 1-2, Bochum, 1966, **KOŞAY H. Z.**, Anadolu'da kayalara hakedilmiş eski Türk işaretleri. Türk Etnografya, XI, Ankara, 1968, **UYANIK M.**, Petroglyphs of South-eastern Anatolia. Asiatic rock paintings and petroglyphs, 1974, Graz, № 24-25, **ERZEN A.**, Eastern Anatolia and Urartians, Istanbul, 1979, № 11, **KOŞAY H. Z.**, Erzurum ve Çevresinin dip Tarihi, Ankara, 1984, № 132-34): Գտնուում է Շարիանի լեռնաշղթայի արեւմտեան մասի հարաւում, Արածանիի աջ վտակ Խնուռ գետի Դալառ (այժմ՝ Գյոքբայ) վտակի ձախ կողմում: Տեղանքի բարձրութիւնը 2300 մ է: Հնավայրը Խնուռից 45 կմ արեւելք է, Կարինից՝ 90 կմ հարաւ-արեւելք, Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի 7-րդ՝ Տուարածանակի գաւառում (կամ 8-րդ՝ Դալառ գաւառում, տե՛ս ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ Բ.

շրջակայքում՝ Անձաւ¹⁴⁵, Փական¹⁴⁶, Բութ¹⁴⁷, Մերվանէ¹⁴⁸, Տիրչին¹⁴⁹, Նառ¹⁵⁰, Փրերեշան¹⁵¹, Զողա լեռներում՝ Գեւարուկ¹⁵², Սաթ¹⁵³, Մեւ-

Յ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, Երեւան, 2001, էջ 231), այժմ Բայրի կոչուող գիւղից 4 կմ արեւելք:

¹⁴⁴ Կայ միջինքարդարեան շրջանի մի քանի ժայռապատկեր, որոնցից առաւել նըշանաւորը «Գրման քար» անձաւում է՝ $7,1 \times 2,2$ մ չափսի եւ 86 պատկերով: Սրա մօտի մի այլ, «Քուրքանաղա» կոչուող անձաւում եւս հնագոյն պատկերներ կան: Ցայտնաբերել է ուսուցիչ Մուստաֆա Թուրամը, ուսումնափել՝ հնագէտ Քըլչ Քյոթբելը, 1965 թ. (KÖKTEN İ. K., (Քերնագիրը չի նշուած, հաւանաբար՝ հաղորդագրութիւն).- Yeni Gazete, Istanbul, 16th February, 1966, Առյնը, Yazılıkaya'da ve Kurbanağa Mağarasında (Kars-Camışlı) Yeni Bulunan Diptarih Resimleri.- Kars Eli, yıl 2, թիւ 20, 1966, էջ 3-16, Առյնը, Kars Çevresinde Diptarih Araştırmaları ve Yazılıkaya Resimleri.- Atatürk Konferansları 1971-72 (V), 1975, էջ 95-104, UYANIK M., նշ. աշխ., էջ 24, ERZEN A., նշ. աշխ., էջ 11, KARPUZ H., Camuşlu'da Yontma Taş Çağı Kaya Resimleri.- Bilim ve Teknik, 112, 1977, էջ 1-6): Գտնուում է Սուրբ Խաչ լեռնա (3138 մ) հարաւարեւելեան ստորոտում, Արաքսի մի ձախ վտակի աջ կողմում: Հնավայրը Կաղզվանից 17 կմ գրեթէ արեւմուտք է, Սարիղամիշից՝ 35 կմ հարաւարեւելք, Կարսից՝ 45 կմ հարաւա, Մեծ Հայքի Այրարատ աշխարհի 5-րդ՝ Արշարունիք գաւառի արեւելքում գտնուող Գոմշուտ գիւղի մօտ (այժմ թարգմանուած է Կամışlı):

¹⁴⁵ Կայ մօտ 20 հսկայակերտ փորագիր ակօսապատկեր: Գտնուում են վան եւ Արճակ լճերի միջև քաղաքից հիւսիս-արեւելք, հարթավայրում, բիսյնական ամրոցի տարածքում, ուր կան նաև Մենուա Ա-ի մի քանի սեպագիր արձանագրութիւններ (BELLİ O., The capital of Urartu, Van, Eastern Anatolia, Net turistik Yayınlar A.Ş., Istanbul, 1989, էջ 8-13, Առյնը, The Anzaf Fortress and the Gods of Urartu, Istanbul, 2000, էջ 9, 16-17): Հնավայրը Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի 2-րդ՝ Տոսպ գաւառի հիւսիսում է:

¹⁴⁶ Կայ մօտ 10 ժայռապատկեր: Ցայտնաբերել է Մելլիկք Օքայերը, 1970 թ. յունիսին (UYANIK M., նշ. աշխ., էջ 25-26, 76-77): Գտնուում են կուչ լեռնաշղթայի արեւելեան վերջնամասում, Արաքսի աջ վտակ կոտոր գետի եւ վանայ լիճ թափուող Հայոց ձոր գետի կուդան վտակի ակունքների շրջանում, կոտոր լիճը մօտ 8 կմ հարաւարեւելք: Հնավայրը Վանից մօտ 45 կմ արեւելք է, Վասպուրական աշխարհի 21-րդ՝ Կրօնունիք (հնագոյն ձեւն է Կորտիճունիք) գաւառի արեւմուտքում, Փական գիւղից հարաւարեւմուտք: Գիւղից հարաւա, մօտ 45 ըոտէ քայլքի հեռաւորութեամբ, բլրի վրայ Աշոտակերտ կամ Աշոտի դուռ ամրոցն է:

¹⁴⁷ Կայ մօտ 150 անձաւապատկեր, հիմնականում պարող դիցուհիների, ուստի այժմ անուանուել է «Կոյսերի անձաւ»: Ցայտնաբերել է հնագէտ Օքթայ Բելլին, 1970 թ. Հոկտեմբերին (UYANIK M., նշ. աշխ., էջ 26, 77, BELLİ O., Doğu Anadolu'da Yeni Arkeolojik Keşfeler. Van - Yedisalkım (Put) Köyü Boyalı Mağara Resimleri.- Tarih Dergisi, 28-29, 1975, էջ 1-40, Առյնը, New Light on the Earliest Art of Anatolia: Kızların

Mağarası (The Cave of Maidens).- Turkish Treasures, 1978. թիւ 2. էջ 28-31, նոյեմբեր, Kızların Mağarası.- A ve S. 4-5, 1979, էջ 20-27, ERZEN A.. նշ. աշխ. էջ 11-12, ALOK E., Anadolud'a kayaüstü resimleri kitabına başlarken, İstanbul, 1988, Akyayınları kültür Kitapları, էջ 12-13): Գտնուում են կանգուարի լեռնաշղթայի Պաշտա (3250 մ. ասուրա-բարելական աղբիւրներում՝ Պածատու, աժմ անուսանախեղուած՝ Բաշեթ-դաղ) լերան արեւելան ստորոտում. Հայոց ճոր գետի վերին հոսանքի շրջանում, գետահովտի ձախ կողմում: Հնավայրը Վանից 40 կմ հարաւ-արեւելք է. Խոչշաբից 15 կմ գրեթէ հարաւ. Վասպուրական աշխարհի 13-րդ՝ թուն Մարդաստան գաւառի արեւմտեան մասում. Բութ (կամ Փութ) գիւղից արեւելք կիրճի չորս անձաներում: Հաւանասբար մօտերքում են նաեւ «Զավանտեք» եւ «Քըհըրի» կոչուած անձաները. որոնցում եւս պատկերներ են յայտնաբերուել:

Մօտ 15 կմ դէպի հարաւ-արեւմուտք՝ վաղմիջնադարեան կանգաւար ամրոցն է:

Մօտ 25 կմ հարաւ-արեւմուտք գտնուում էր հայոց գիւղանավէպի Ագուաւաքար կամ Դարբնացքար վայրը՝ Անահիտ եւ Արուբանի գիցուհիների պաշտամունքի կենտրոնակերից մէկը. ուր յետագյում հիմուեց Մարիամ Աստուածածնին նույի րուսած Հոգեաց վանքը (ԵՐԵՄԵԱՆ Ս. Տայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երեւան, 1963, էջ 36, ՅԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆ Բ. Յ. նշ. աշխ. էջ 361): Ալափիսով, «Կոյսերի անձաւի» հնագոյն պատկերների եւ մայր աստուածունու պաշտամունքի աղերսներն աւելի քան ակնառու են:

148 Կայ մի քանի փորադիր քարասալ, բերուած հայոց գերեզմանոցից եւ գրուած տան պատի մէջ, հայերէն առանձին տառերով ու նշաններով: Ցայտնաբերուել են 1967 եւ 1969 թթ. (UYANIK M., նշ. աշխ. էջ 47-50): Գտնուում են Կորդուաց, Ալգարք (Հագքարի) եւ Ագարակի լեռնաշղթաների միացման վայրից հիւսիս, Զերմ (Արեւելեան Տիրուհիս) գետի ձախ ափին: Հնավայրը Վանից մօտ 60 կմ հարաւ է. Զուլամերկից 45 կմ հիւսիսարեւմուտք. Շատախից՝ 30 կմ գրեթէ արեւելք. Վասպուրական աշխարհի 11-րդ՝ Անձաւացիք գաւառի հարաւում, այժմեան Մերկանէ գիւղի մօտ (Ճանապարհային կայսէն է Զուլամերկ - Վան ճանապարհին):

149 Կան հազարաւոր ժայռապատկերներ, որ հիմականում Արքայի գահ (այժմ Թահիթի Մելիք, 2650 մ), Արքայի ջուր (այժմ Քահնրի Մելիքան, 2800 մ), Հայի Տիրուհին եւ այլ վայրերում են: Նկատուած մինելով գեռեւս 1937 թ., այս բարձրարժէք հնավայրը փառացի յայտնաբերուեց միայն 30 տարի անց. թուրք ժայռապատկերաբանն Մուվաֆֆակ Ույամըքի երկարատեւ որոնումների չնորհիւ (UYANIK M., Türkiye'nin güney-doğusunda prehistoric araştırmalar (Prehistoric Research in South-East Turkey).- Belleten Türk Tarih Kurumu (այսուհետ՝ BTTK), XXXII, 1968, թիւ 125, էջ 93-96, UYANIK M., Nuovi ritrovamenti di Tirisin-Alm.- Valcamonica Symposium, Actes du Symposium, Capo di Ponte, 1970, UYANIK M., նշ. աշխ., էջ 92, 101, ERZEN A., նշ. աշխ., էջ 12-13): Գտնուում են Ագարակի լեռների միջին մասերից հիւսիս: Տիրուհին՝ ժայռապատկերների գրաւած տարածքը մեծ է, 10-15 կմ չափերով, որի միջնակէտը Վանից մօտ 65 կմ հարաւ է. Շատախից՝ մօտ 25 կմ հարաւ-արեւելք, Անձաւացիք գաւառում: Տիրուհին կամ Տիրիշին տեղանուան մէջ ակնյայտ է հին հայոց գիտութեան, դպրութեան եւ արուեստների հովանաւոր

լեռ¹⁵⁴, Կորդուքում՝ Ալպի¹⁵⁵, Արարադ լեռ¹⁵⁶, Հայոց Միջագետքում՝ Դէմիր-կապ¹⁵⁷, Կոմագէնսում՝ Աղըյաման¹⁵⁸, Կիլիկիայից հարաւ՝ Լաթաքիա, Քեսաբ¹⁵⁹եւ այլն:

աստուած Տիրի անունը: Տիր դիցանունն ուղղակիօրէն կապւում է այս հնավայրի ժայռապատկերներում առատօրէն հանդիպող բազմաթիւ նշանագրերի՝ գրի նախնական ձեւերի առկայութեան հետ:

150 Կայ 22 փորագիր ժայռապատկեր: Յայտնաբերել է ուսուցիչ Հալիլ Զարքչին, 1970 թ. գարնանը (UYANIK M., նշ. աշխ., էջ 77-78): Գտնուում են Ադարակի լեռնաշղթայի արեւմտեան մասի հիւսիսային ստորոտում, Ջերմ (Արեւելեան Տիգրիս) գետի ակունքների շրջանում, ճախ ափից մօտ 3 կմ հեռաւորութեամբ: Հնավայրը վանից մօտ 70 կմ հարաւ է, Մոկսից՝ 33 կմ հարաւ-արեւելք, Շատախից՝ 18 կմ հարաւ, Վասպուրական աշխարհի 12-րդ՝ Տրպատունիք գաւառի արեւմուտքում, Նար գիւղի մըջակաբում: Գիւղից 7 կմ հիւսիս-արեւմուտք վաղմիջնարմբան Զռայլ ամրոցն է (աւերտել է 1442 թ.):

151 Հստ տեղեկութիւնների, Նարից 3 ժամ քայլքի հեռաւորութեամբ (մօտ 10-15 կմ) գէտի արեւմուտք, Փրերեշան կոչուած գիւղի մօտ եւս պատկերներ կան (UYANIK M., նշ. աշխ., էջ 79):


152 Կայ 1124 ժայռապատկեր, որոնցից 52-ը յայտնաբերուել են 1956 թ., 502-ը՝ 1968 թ., Մ. Ոյանըի եւ աւստրիացի երկրաբան Վիլհելմ Ֆրեկի կողմից (FREH W., UYANIK M., Hakkari-Sat dağlarında, Gevaruk vadisi içinde bulunan Kaya resimleri hakkında tebliğ (Felszeichnungen im Südostanatolien).- BTTK, XXI, 1957, թիւ 84, էջ 621-23, UYANIK M., Türkienin ..., էջ 93-96: 1968 թ. անգլացի լեռնագնացներն այսեղ յայտնաբերել են եւս 570 ժայռապատկեր (ROYLE J. B., Description of Gevaruk Carvings; Central Council of Physical Recreation. 15. Fairway Keyworth Nottinghamshire, England, 1968): Այս հնավայրի մասին տե՛ս UYANIK M., նշ. աշխ., էջ 66-75, ANATI E., Anatolia's Earliest Art.- Archaeology, հո. 21, 1968, թիւ 1, էջ 22-35, ERZEN A., նշ. աշխ., էջ 12-13: Գտնուում են Զողա լեռնաշղթայի Սաթ լեռնագագթից (3794 մ) 3 կմ արեւելք, Գեւարուկ լիի եւ դրանից ակունքիով՝ Մեծ Զաւի ճախ վտակ Սաթ գետի ափերին: Հնավայրը Մեծ Հայքի Կորճայք աշխարհի (Հնագոյն ձեւն է Կորտիճայք) 9-րդ՝ Կարթունիք գաւառի արեւմուտքում է:

153 Կայ 25 ժայռապատկեր: Յայտնաբերել են գերմանացի լեռնագնացները, 1968 թ. (THOMA H., Berde am Rande von Eden. Alpenvereins-Jahrbüch des DAV, München, 1970): Գտնուում են Սաթ լեռան հիւսիս-արեւելեան լանջի Սաթ լճից հիւսիս: Հնավայրը Կարթունիք գաւառի արեւմուտքում է: Այս մասին տե՛ս UYANIK M., նշ. աշխ., էջ 66-75, նաեւ՝ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ թ. Ա., ԽՄՐԱՅԵԼԵԱՆ թ. Բ., ՌԵՎԱՅԵԼԵԱՆ թ. Ռ., նշ. աշխ., էջ 24:

154 Գտնուում է Զարասպ լեռից արեւմուտք, Մեծ Զաւ գետի մի այլ ճախ վտակի աջ կողմում: Հնավայրը Մեծ Հայքի Մարաց Ամուր աշխարհի 1-ին՝ Նիխորական գաւառի հիւսիս-արեւելքում է, այժմեան Բեսուսուն գիւղի կամրջի մօտ (UYA-

- NIK M.**, նշ. աշխ., էջ 21): Մօտ 35 կմ հեռաւորութեամբ, ներկայիս Իրաքի հիւսիսում, հոչակաւոր Շամիդար միջինքարէդարեան հնավայրն է:
- 155 Կայ 2,6 x 1.25 մ չափսի մի քարասալ. որ նման է թաքցուած գանձի տեղը նշող գծագրի: Յայտնաբերել են Մ. Ույանը և Հնագէս Մահմետ Օգդողանը, 1967 թ. սեպտեմբերին (*UYANIK M.*, նշ. աշխ., էջ 23-24 եւ էջ 30-ի քարտէզը): Գտնուում է Տիգրիսի ձախ վտակ Արեւելեան Խարուրի ակունքների շրջանում: Հնավայրը կորճայք աշխարհի 2-րդ՝ Վերին Կորդիք գաւառի հիւսիսում, այժմեան Մեզրեա գիւղից արեւմուտք. Փիշթազիրէ վայրում: Մօտերքում վաղմիջնադարեան Ալկի ամրոցն է (ԽՈՐ., Բ գիրք, ԾԳ, էջ 183, ԵՐԵՄԵԱՆ Ս. Տ., նշ. աշխ., էջ 32, ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ Բ. Յ., նշ. աշխ., էջ 275), որի անունով էլ կարելի է կոչել հնավայրը:
- 156 Կայ մի քանի փորագիր ժայռապատկեր: Նկատուել են գեռեւս 1945 եւ 1967 թթ. (*UYANIK M.*, նշ. աշխ., էջ 83-86, *ALOK E.*, նշ. աշխ., էջ 20): Գտնուում են Չուղի լեռնաշղթայի Արարագ (2114 մ, բիայներէն՝ Արարտու, ասուրա-քարելական աղբիւր-ներում Նիբոր) լեռան հարաւարեւմուեան սոորոտում, հիւսիսից Տիգրիս եւ նրա ձախ վտակ Փոքր Խարուր գետերը թափուող վտակների ակունքների շրջանում: Հնավայրը Բզարդէ (յետագայում՝ Ջղիրէ) քաղաքից մօտ 35 կմ արեւելք է, Կորճայք աշխարհի 1-ին՝ Կորուուք գաւառի Հարաւում: Մօտերքում վաղմիջնադարեան թման ամրոցն է: Տէ՛ս ԵՐԵՄԵԱՆ Ս. Տ., նշ. աշխ., էջ 53, ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ Բ. Յ., նշ. աշխ., էջ 276-278:
- 157 Գտնուում է ժամանակակից Սիրիայի տարածքում: Յայտնաբերել են մինչեւ 1922 թ., Տուռ-Ալբրին լեռների արեւելեան մասի հարաւային սոորոտում: Հնավայրը Բզարդէից՝ մօտ 50 կմ Հարաւա-արեւմուտք է, Մծրինից մօտ 55 կմ արեւելք, Շնգարից՝ 70 կմ հիւսիս. Մեծ Հայքի Միջագետք Հայոց աշխարհի 2-րդ՝ Արուսատուն գաւառի հիւսիս-արեւմուտքում *BOSSEURT H. TH.*, *Altsyrien, Tübingen, 1951.*, էջ 46, 207-8, նկ. 687-97, Տէ՛ս ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Յ. Ա., ԽՄԱՅԵԼԵԱՆ Յ. Ռ., նշ. աշխ., էջ 24:
- 158 Կայ մի քանի հնագոյն անձաւապատկեր: Յայտնաբերել են Փրսնախացի հնագէտ Ե. Պիտուարը եւ թուրք հնագէտներ Շնվիեր Քանտուն եւ Համիտ Քոշայը, 1938 թ. (*PITTARD E.*, *Gravures rupestres en Anatolie.- Archives Suisses d'Anthropologie générale, tome VII, թիւ 1, Geneve, 1938, էջ 187-190, KANSU A.*, *İnsanlığın kaynakları ve ilk medeniyetler.- BTTK, XIII, 1946, (BOSSEURT H.T.H., նշ. աշխ., էջ 46, 207-15, նկ. 686; Գտնուում են Աղբյամանից մօտ 2 կմ հիւսիս, Փիրին վայրի Փալանլը անձաւում, Եփրատի աջ վտակներից մէկի աջ ափից 5 կմ արեւմուտք: Տէ՛ս նաեւ ՍԱՐԴԱՐԵԱՆ Ս. Յ., Նախնադարեան հասարակութիւնը Հայաստանում, Երեւան, 1967, էջ 118, *ANATI E.*, նշ. աշխ., էջ 22-35, *UYANIK M.*, նշ. աշխ., էջ 18, *ERZEN A.*, նշ. աշխ., էջ 11: Մօտերքում, մօտ 50 կմ գրեթէ հիւսիս-արեւելքում, Հին Աշխարհի ութերրոդ Հրաշալիքներից մէկն է՝ Կոմադէնի Անսոիքոս Ա. Երուանդունի արքայի, մթ.ա. 40 թ. Կիլիկեան Տարոսի Նեմրութ մերան վրայ կառուցած դամբարան-սրբավայրն է:*

Մեծ Հայքից հարաւ եւս ժայռապատկետներ կան Նինուէ¹⁶⁰ աւելակների մօտ, Պաղեստինում՝ Գեզեր եւ Մեգիդո (Արամագեդ-դոն)¹⁶¹, Յորդանանում՝ Պետրա¹⁶², Քիլվա¹⁶³, Արաբական թերակղզու հարաւում՝ Հուրեյդա եւ Հուդա¹⁶⁴ եւ այլն:



Դեպք 33

բ) Ժայռապատկերներ կան, մասնաւորապէս, Մեսրոպ Մաշտոցի գործունէութեան վայրերում՝ Գողթնում (Նաւասար), Արագա-

¹⁵⁹ Գտնուում են Միջերկրականի ափից մօտ 5 կմ արեւելք. Օրոնտեսի գետաբերանից 13 կմ հարաւ, Անտիոքից 35 կմ գրեթէ հարաւ-արեւմուտք, Լաթաքիայից 50 կմ գրեթէ հիւսիս (ըստ արաբագէտ Նուբար Զալըմեանի բանաւոր հաղորդման, 17 յուլիսի 1998 թ.):

¹⁶⁰ Գտնուում են ժամանակակից Իրաքի տարածքում՝ Մոսուլից 15 կմ հիւսիս-արեւելք (ըստ Ն. Զալըմեանի հաղորդման):

¹⁶¹ Գտնուում են Երուսաղէմից արեւմուտք եւ դէպի հիւսիս: Յայտնաբերուել են մինչեւ 1912 թուականը (Գեզեր) եւ մինչեւ 1938 թ. (Մեգիդո), տե՛ս BOSSEERT H. TH., նշ. աշխ., էջ 83, 314-15, նկ. 1057-61, էջ 124-ի քարտէզը): Յ. Ա. Մարտիրոսեան, Յ. Ռ. Խորայէլեան, նշ. աշխ., էջ 24:

¹⁶² Գտնուում են Նաբաթէայում (BOSSEERT H. TH., նշ. աշխ., էջ 93, էջ 125 եւ 127-ի քարտէզները):

¹⁶³ Յայտնաբերուել են մինչեւ 1938 թ.: Միջինքարեդարեան ժամանակաշրջանի սրատկերներ (BOSSEERT H. TH., նշ. աշխ., էջ 94, 355-365, նկ. 1223-30, էջ 128-ի քարտէզը): Տե՛ս նաև «Յորդանան»: ՀԱՀ, հա. 6, 1980, էջ 588, «Խորդանիա». Բольшая советская энциклопедия, հա. 10, Москва, 1972, էջ 386:

¹⁶⁴ Գտնուում են ժամանակակից Եմենի տարածքում (BOSSEERT H. TH., նշ. աշխ., էջ 97, 128, 365, նկ. 1257-58, էջ 128-ի քարտէզը):

ծոտնում (Ոսկեհատ, Օշականից 5 կմ արեւմուտք), ինչպէս նաև Արցախում (Շուշի), գուցէ եւ՝ Տարօն աշխարհում:

դ) Մեծ է ժայռապատկերների խմբայնութեան աստիճանը՝ թիւը պատկերախմբում:

դ) Մեծ է նշանների թիւը ժայռապատկերներում:

ե) Նշանների շարքում մեծ մաս են կազմում տառանմանները:

զ) Տառանման նշանները դրսեւորում են միեւնոյն նշանի բազմաթիւ ոճական տարբերակներ, այսինքն, առկայ է որոշակի կենտրոնացում տուեալ նշանի միջին տեսքի շուրջ կամ անցումային ու զարդընթացային շարքեր:



Նկար 34



Նկար 35


է) Տառանման նշանները որոշակի կենտրոնացում են դրսեւորում յայտնի որեւէ առարկայի, կառոյցի, երեւոյթի, կենդանու կամ մարդու մալրմնի տարբեր մասերի, ձեւերի, դիլիքերի ու վիճակների միջին պատկերակերպի շուրջ, այսինքն, այդ իրողութիւնների գծադիր արտայատութիւնն են (նկ. 36-39):



Նկար 36



Նկար 37



Նկար 38



Նկար 39

ը) Կան բազմաթիւ միջանկեալ, գուցէ անցումային ու գարգընթացային տարբերակներ տառածեւերի միջեւ: Դրանց մի մասը նըմանւում է այլ, մասնաւորապէս՝ յունական, լատինական, վրացական, աղուանական տառերին (նկ. 40, 41):




Նկար 40



Նկար 41

Եւ վերջապէս, ժայռապատկերային մշակոյթի համաշխարհային տարածման խմ ուրուագծած քարտէզից երեւում է, որ հայոց դէպքում գրի ծննդեան կամ ձևաւորման օջախը միաժամանակ եւ ժայռապատկերման օջախն է, ինչը հազուադէպ է այլ ազդերի ու լեզուների դէպքում:

Ժայռապատկերները եւ մ.թ.ա. գ - Ա. հազ. հիմնական գրային համակարգերը



Նկար 42

Եթէ սահմանափակուենք բոլորիս քաջ յայտնի, միայն Գեղամայ եւ Սիւնեաց հնագայրերի նիւթով, արդէն իսկ կ'երեւան մի շարք

ակնառու նմանութիւններ մաշտոցեան (եւ այլ լնգունների) տառերի եւ ժայռանկար տառանման նշանների միջեւ, կրկնեմ՝ համեմատում է միայն տեսքը:

Որ ժայռապատկերների տառանման նշանները դաղափարագրեր են, այլ ոչ թէ խակական ու լիարժէք տառեր (այսինքն՝ միաժամանակ հնչիւնանիշ եւ բառակազմ տարր), պարզ երեւում է մեր հազարաւոր ժայռապատկերների արդէն իսկ թռուցիկ դիտարկումից: Այն, որ նշաններն իրօք դաղափարագրեր են, ակնյայտ է, քանզի՝

ա) շատ յաճախ են հանդիպում ժայռապատկերի պատկերակիլ մակերեսին՝ առարկաների, երեւոյթների, կենդանիների ու մարդկանց կոնկրետ պատկերների մօտ, կրկնելով, նմանուելով կամ չնմանուելով վերջիններիս: Կարեւորն այն է, որ նշանը պատկերուած է վորքը-ինչ առանձնակի, այսինքն՝ ունի որոշակի ինքնուրոյնութիւն՝ սեփական դեր ու նշանակութիւն (նկ. 43-45):



Նկար 43



Նկար 44



Նկար 45

բ) Նշան ասելով ի նկատի չունեմ որեւէ կոնկրետ ու հասկանալի պատկերից մտովի անջատած ինչ-որ մաս, այսինքն՝ նշանները երբեք որեւէ կոնկրետ ու յայտնի առարկայի կամ կենդանու պատկեր կազմող տարր չեն:

գ) Նշան չեմ համարում այն անաւարտ ժայռապատկերը որին մէկ-երկու գծիկ է պակասում, որպէսզի լրանայ ու պարզ երեւայ քաջ ծանօթ առարկան կամ կենդանին¹⁶⁵ (նկ. 46, 47):

¹⁶⁵ Պատկերացնենք, օրինակ, այծի սովորական գծապատկեր, որում բացակայում է առջեւի երկու ուսքից մէկը: Բայց եթէ բացակայում են եղջիւրները՝ արդէն դժուար է ասել, դա առարտուն նշա՞ն է, թէ անաւարտ կենդանապատկեր:



Նկար 46 ma 47



Նկար 48

գ) Ժայռապիրագիր մակերեսին նշանները յաճախ են հանդիպում խմբերով՝ առանց վերոյիշեալ կոնկրետ պատկերների։ Կան նաև միայն մէկ նշանից բաղկացած ժայռապատկերներ։

Ե) Առաջմա յայտնի է ընդամէնը երկու-երեք ժայռապատկեր, որը պարունակի գէթ երկու կից կամ կցագիր տառանման նշան, այս ինքն՝ չկայ տառակապակցութիւն եւ այն էլ՝ իմաստակիր՝ բառ (նկ. 48):

Մակայն, անհրաժեշտ է նշել ապագայ հետազօտութիւնների առումով կարեւորուող մի հանգամանք. թէպէտ մէկ ժայռապատկերի վրայ չկայ գէթ երկու տառանմանից կազմուած համակցութիւն, բայց դա չի նշանակում, որ պէտք է բացառել նաև իրար հարեւան մի քանի ժայռապատկերի իմաստակից լինելը յատկապէս, եթէ դրանք միմյան նշաններ են պարունակում։ Ասուածի լաւագոյն օրինակը Գեղամայ լեռներում է 25 մ երկարութեամբ շերտաձեւ մի պատկերախումբ, բաղկացած 45 ժայռապատկերից, որոնցից լոկ մէկն է ցուցադրում կոնկրետ պատկեր՝ յուշ (նկ. 49)¹⁶⁶. Միւս 44 ժայռապատկերի մակերեսին կայ մօտ 220 նշան, որոնցից միայն հինգն են որոշակի (կեռիսաչ ու արեւանշան, նկ. 50, 51). Մնացեալն անորոշ եւ առաջմա անհականալի նշաններ են, անկասկած՝ իմաստակիր, խորհրդանշաններ (նկ. 52-54). Ակամայ հակում ես կարծելու, որ ո՛չ թէ բառ, այլ ամբողջ մի նախադասութիւն կամ գուցէ էլ ես տեսնում (նկ. 55):

¹⁶⁶ Ի գէպ, զարմանալի է, բայց յոււը փորագրուած է բաւականաչափ իրապաշտական ոճով. թերեւս կարելի էր սպասել, որ նման ամբողջովին նշանակագմ իւլմբում յոււն էլ պէտք է պատկերուէր խորհրդանշօրէն կամ գծային-սխեմատիկ ոճով:



Նկար 49



Նկար 50



Նկար 51



Նկար 52



Նկար 53



Նկար 54



Նկար 55

Վերստառնալով մեր խնդրոյ առարկային՝ ժայռագրերի ու Մեսոպատամ տառերի աղերսներին, նշեմ, որ միանգամայն անընդունելի է, որ Մաշտոցը տառերը ստեղծել է յունականներից։ Տառերի՝ յունականի հերթականութեամբ դասաւորուածութիւնը չափազանց թոյլ կուռան է։ Իսկ տառաձեւերի հիմքերի մի շարք ակնառու նմանութիւնները (Ա - ալֆա, Բ - բետա, Գ - գամմա, Ե - էփալոն), իսկառ ասած, ուղղակի վկայութիւն են միմիայն նմանութեան, բայց ոչ երբեք՝ փոխառման ուղղութեան։ Հնդեւրոպաբանութեան եւ, ընդհանրապէս՝ բոլոր ճառագայթակերպ տարածումային ու պայթունային տեսութիւնների առանցքային գաղափարների համաձայն, եւ առհստաբակ, զուտ արամաբանօրէն՝ առարկաների նմանութիւնը կամ նըման վիճակը արդիւնք է լոկ համատեղ ծագման ու գարդընթացի։

Երկու լեզուների տառերը ոչինչ չեն ասում նաեւ ստեղծման կամ փոխառուման ժամանակի մասին։ Բայց անիմաստ է խօսել որեւէ երեւոյթի ծագման ժամանակի մասին՝ առանց նշելու տեղը։ Տառերը լուսմ են եւ ստեղծման տեղի մասին։ Այստեղ է, որ հնդեւրոպաբանութեան նմանութեամբ գործում են եւ համեմատական ժայռապատկերաբանութիւնը եւ գրաբանութիւնը՝ քննելով բազմաթիւ ժայռագրեր եւ մի շարք հնագոյն լեզուների տառաձեւեր։ Եղիպտական, փիւնիկեան, եբրայական, ասորական, յունական, պարսկական, հռոմէական, վրացական, աղուանական, հաբէչական, հնդկական եւ այլ ժողովուրդների ձեւաւրուման տարածքներում ժայռապատկերման արուեստը զարգացած չէ, եղածներն էլ կոնկրետ են՝ ոչ խորհրդանշանակիր, եւ իբրեւ դրա հետեւանք՝ չկան տառանման նշաններ¹⁶⁷։ Իմ հաշուումներով, միայն Գեղամայ եւ Սիւնեաց լեռների ժայռապատկերման առկայութեամբ առկայ են, խիստ մօտեցմամբ, հայկական, յունական եւ լատինական եւ այլ այբուբենների 80 տառի մօտ 300 օրինակ, իսկ եթէ հաշուառել նաեւ մօտաւոր նմանութիւնները, մեծատառն ու փոքրատառը, ապա տառերի թիւը կը հասնի 120-ի, օրինակներինը՝ մինչեւ 700-ի։

Պէտք է կարծել, որ Հայաստանում ժայռագրութիւնը գոյստեւել է մինչեւ մ.թ.ա. ԺԵ - Ե. դարերը, աստիճանաբար տեղը զիջելով տաճարային մեհենագրին, օտար ու տեղական սեպագրերին, նախամշտոցեան ենթալլեալ հնշիւնագրերին ու այբուբեններին, յետագյում էլ հնշիւնային օտար գրերին, որոնք տեղեկատուութեան կուտակման ու փոխանցման առաւել կատարեալ համակարգեր են¹⁶⁸։

Ժայռագրութիւնը հնդեւրոպական ընդհանուր մշակոյթի կարեւորագոյն մասերից է, ինչը բոլորն են ժառանգել, բայց այն յա-

¹⁶⁷ Զմուսաննք, որ ժայռապատկերն, ի տարբերութիւն պապիրուսի, արմաւենու տերեւի, կամ սալիկի, արձանիկի, կնիքի, դրամի, մագաղաթի ու գրքի՝ անշարժ է գտնում է նոյն տեղում, քարաքեկորի երկրաբանական ձեւաւրուման հարիւր հազարաւոր եւ պատկերումից անցած հազարաւոր տարիների ընթացքում, ասել կուզի՝ Փիգիկապէս ենթակայ չ տարածական մեծ տեղաշարժերի ու փոխանման։ Ժայռապատկեր - այբուբեն աղեքաների ինդուում (եւ ընդհանրապէս, հնագիտութեան մէջ) կարեւորագրութիւնը թուագրումն իմսդիրն է, քանի ժարարուեստի ուսումնասիրութիւնից ստուցուած գրեթէ բույր արդինքները կ'իմաստագրկուեն, եթէ պարզուի, որ դրանց տարիքը, ասենք, մի քանի դար է կամ թէկուգ՝ 2000 տարի։ Կը յաբնուեն բազմաթիւ անաբրունկպմներ։

¹⁶⁸ Ի հարկէ, այս ամէնը չափտք է նման պարզ սիմեմայվ պատկերացնել, քանի գրութեան նշուած ձեւերը մեկուսացած, «մաքուր» տեսքով չեն կիրառուել։ Ասկասկած, առկայ է եղել երկու կամ առելի ձեւերի համաժամանակեայ գոյութիւն, նոյն տեքստում խառը կիրառում եւ այլն։

բատեւել կամ զարդացել է միայն քարաշատ, ժայռում վայրերում: (Նըշեմ, որ խօսքը քարափորագրութիւնների մասին է, ոչ թէ անձաւանկարչութեան: Վերջինս առաւել վաղ ծագում ունի, այդ ժամանակներում, արդի տուեալներով, խօսքն ու լեզուն այնքան զարդացած լինել չէր կարող, որ պահպանման միջոց՝ գիր պահանջէր):

Վերոյիշեալ ուսումնասիրողների մի մասը համակարծիք են, որ հաւանաբար, հայոց տառերը ստեղծելիս Մաշտոցն ուղղակիորէն չի օգտուել որեւէ լեզուի այբուբենից: Բայց արդեօք դա կարող է նշանակել, որ որեւէ այլ կարգի աղբիւր (ոչ-այբբենական համակարգ) հայոց այբուբենի ստեղծման հիմք չի ծառայել: Ինչպէս ասուեց վերը, աւելի քան մէկ դար առաջ Կ. Ֆառվլմանն է նշել, որ Մաշտոցը ո՛չ թէ գտաւ հայոց նշանները, այլ ժողովրդի ժառանգութիւն հանդիսացող նշանները մտածեց իբրև տառեր գործածել:

Կորիւնն ու Մովսէս Խորենացին վկայում են, որ Մաշտոցը, թողնելով աշխարհիկ գործերը, գնում է Վասպուրական նահանգի Գողթն գաւառը (առաջին քարոզչութիւն, 398-400 թթ.), տրում մենակեցութեան ու ճշմարիտ հաւատքի բերում տեղի հայերին¹⁶⁹: Այստեղ է, որ զբարով օտար (ասորերէն, յունարէն) լեզուներով Սուրբ Գիրքն ընթերցելու եւ քարոզելու դժուարութիւնները, յղանում է հայերէն դրեր ստեղծելու մեծ գաղափարը՝ «հնարել գտանել նշանագիրս Հայոց լեզուիս»¹⁷⁰:


Աւանդութիւնն ասում է, թէ Մեսրոպը Գողթնում քարոզչութիւնների ժամանակ բնակուել է Մորվանիս կամ Մեսրոպավան գիւղում¹⁷¹ (տեղական զոկերի բարբառով՝ Մըըրվանիս, այն է՝ Մեսրոպավանք): Հնագոյն այս գիւղը (Ե. դար) գտնուում է Փոքր Կովկասի բարձրագոյն կէտ՝ ՀՀ երկրորդ լեռնագագաթ Կապուտջուղի (3904 մ) արեւմտեան բարձրունքի՝ Նաւասարի (Տապանասար) ստորոտում, Մեսրոպավան գետակի ափին (այժմ՝ Նախիջեւանի տարածքում):

¹⁶⁹ ԽՈՐ., Գ գիրք, Կ, էջ 340:

¹⁷⁰ Անդ, Գ գիրք. Խէ, էջ 316, ԿՈՐԻՒՆ. նշ. աշխ., ԵՐ., էջ 40:

¹⁷¹ ԼԱՍԱԹԵԱՆ Ե., Նախիջեւանի գաւառ, մասն Ա. Գողթն.- Ազգագական հանդէս, գիրք ԺԱ, Թիֆլիս, 1904, էջ 323-325, ԱՃԱԽԵԱՆ ՀՐ., նշ. աշխ., էջ 174-175, ԱԲԾՂԵԱՆ Մ., ՀՀԳԴ, էջ 73, Առյմը, ՄՄՀՀԳԴ. Սովետական գրականութիւն, 1941, թիւ 1, էջ 48, Առյմը, ՄՄՀՀԳԴ, 1962, էջ 247, Առյմը, Երկեր, Հա. Գ, էջ 88, ՂԱՆԱԼԱՆԵԱՆ Ա. Տ., ՄՄՀՀԳԴ, 1963, էջ 336, Առյմը, Աւանդապատում, էջ 12 (թիւ 15), էջ 169 (թիւ 438):

Կապուտջուղի միւս բարձունքի՝ Կռուանկոչի (Կռնակոչ) ստորոտին գտնւում է Մեսրոպ Մաշտոցի անձաւը¹⁷²: Կռուանկոչի անձաւային բնակատեղիների եւ բրոնզէդարեան դամբարաննադաշտերի հնագիտական ուսումնասիրութիւնները, Նաւասարի ստորոտում 70-ական թթ. յայտնաբերուած հազարաւոր ժայռապատկերները (նկ. 56) հաւաստում են այս տարածքի, վաղնջական ժամանակներից բնակեցուած լինելը (մ.թ.ա. Գ. Հազ.)¹⁷³:



Նկար 48

Ցիշենք Ռաֆայէլ Իշխանեանի համարձակ հարցադրումները. «Արդեօ՞ք Մաշտոցը լեռներում նգնաւոր եղած տարիներին չի տնաւել ժայռապատկերներ եւ նրանցում տարրեր նշաններ-նշանագրեր: Եւ յետոյ, երբ հայոց տառեր ունենալու գործում նրան ոչ ոք օգնել չկարողացաւ, արդեօ՞ք հոգեկան տուայտանքի եւ երկունքի պահերին նրա մտքում որեւէ կերպ չեն վերարտադրուել նգնաւոր եղած տարիներին լեռներում տեսած նշանագրերը: Ի հարկէ, ժայռապատկերները կարող էին Մաշտոցին ինչ-որ ճեւով օգնած լինել, սուկ նշաններ-նշանագրեր գծելու գործում, իսկ զինաւորը՝ իւրաքանչիւր նշանագրին հնչիւնական առանձին արժեք յատկացնելը եւ դրա համար հայոց լեզուի հնչիւնական համակարգը սույգ որոշելը Մաշտոցի աշխատանքի արդինենքն էին: Ամեն դեպքում էլ, ի հարկէ, հայոց տառերի գիւտն ամրողութեամբ Մաշտոցի՝ ամենամեծ հայորդու, անզուգական հանճարի ծնունդն էր»¹⁷⁴:

Գրերի գիւտից յետոյ (404 թ.) Մաշտոցը զբաղւում է ուսուցչութեամբ, ստեղծում այբուբեններ վրացիների ու աղուանների համար եւ ապա՝ կրկին (երրորդ քարոզչութիւն, 407-08 թթ.) դնում Գող-

¹⁷² ՂԱՆԱԼԱՆՆԵԱՆ Ա. Տ., Աւանդապատում, էջ 37 (թիւ 90):

¹⁷³ ԱՅՎԱԶԵԱՆ Ա. Ա., նշ. աշխ., էջ 45-53, ԱԼԻԵՎ Բ. Ռ., Наскальные изображения Гемигая.- Краткие сообщения, Москва, 1977, թիւ 148, էջ 50-52, Առյնը, Петроглифы Гемигая.- Памятники материальной культуры Азербайджана, Баку, 1985:

¹⁷⁴ ԻՇԽԱՆՆԵԱՆ Ռ., նշ. աշխ., էջ 24:

թըն¹⁷⁵, գուցէ ... նաեւ՝ տեղի ժայռապատկերները նորից տեսնելու նպատակով:

Պատմաշխարհագրական, հնագիտական եւ աւանդապատումային այս տեղեկութիւնները միասին վերցրած բերում են եղրայանդման, որ երկար տարիներ ապրելով այստեղ, մինչեւ տառերի գիւտը, Մաշտոցն, անկասկած, կարո՞ղ էր տեսած լինել տեղի, խորհրդանշան-գաղափարագրերով շատ հարուստ ժայռապատկերները եւ յետագյում՝ յիշողութեամբ, օգտուած լինէր դրանց ձեւերից՝ տառի տեսքի ու գծագրութեան առումով։ Առնուա՛զն։

Բնականաբար, սա դոյզն իսկ չի նուազեցնում Սուրբ Մաշտոցի՝ իր ազդին այբուբեն, նոր ուսում եւ լուսաւորութիւն պարզեւած մարդու մեծութիւնը։ Հակառակը. առաւել ամբողջանում է նրա կերպարը, որպէս մեծագոյն հայի, իր ազդի մշակոյթի բոլոր փուլերի հարազատութիւնը, ամբողջականութիւնն ու շարունակականութիւնն ըմբռնած խոշորագոյն մշակութային ու քաղաքական գործչի։

Մաշտոց...

Այսիմքն՝ Այր մի, որ եկաւ ապացուցելու,

Թէ մի տեղ վերջը դառնում է Սլիզր։

Այսիմքն՝ Այր մի, որ ապացուցեց,

Թէ հրաշք չկա՞յ,

Այլ կայ լոկ կարի՞՛:

Այսիմքն՝ Այր մի, որ ապացուցեց,

Եւ կոչ է անում ապացուցելո՞ւ.

Որ այնուեղ է լոկ սիրամքն սկսում.

Ուր վերջանում է ամէ՛՛ մի հնար...¹⁷⁶

ԿԱՐԵՆ ԹՈԽԱԹԵԱՆ

¹⁷⁵ ԽՈՐ., Գ գիրք, Խէ. Էջ 317։

¹⁷⁶ ՊԱՐՈՅ ՍԵՒԱԿ, Երկերի ժողովածու 6 հատորով, հա. 4, Երեւան, 1973, Էջ 264։

The resemblances between Mashtots's alphabet characters and the rock-carved symbols in Armenia (summary)

Karen Tokhatian

Institute of History,
National Academy of Sciences,
Republic of Armenia

The study of pre-Mashtots writing symbols and Mesropian letter-forms are of capital importance for Armenology. We have a number of written testimonies proving the existence of writing symbols in Armenia before Mashtots.

This issue has been investigated by many Armenian and foreign orientalists, linguists, and grammatologists.

Numerous examples of pre-Mashtots writings are evident in archaeological artifacts and especially rock-carvings featuring thousands of carved pictographic symbols. The Armenian Highland, a cradle of rock-carvings, has also been the birth place of various writing systems as shown by the map presented by the author.

Koryun and Movses Khorenatsi report that having abandoned worldly pursuits, Mesrop Mashtots retired to the Goghtan Region, in the Vaspurakan Province, where he led a secluded life and converted the local population to Christianity. Here, in fact, is where the site of Mashtots's living cave is located, around which many rock-images were discovered in the 1970s.

The sum of historical, geographical, archaeological and folklore data leads us to conclude that having lived there for many years, Mashtots certainly should have seen the nearby rock-images rich in symbolic ideograms, and has used them while creating the letter-forms of the Armenian alphabet.

This does not diminish Mesrop Mashtots's reputation as the creator of the alphabet, a great illuminator and pioneer of a new culture. His image as one of the greatest figures of Armenian history is characterized as a cultural and political giant who epitomized the integrity and continuity of the development of his national culture.